

3607

42
d. 6

1912

281-6

u-93

25

5000

281-6

Q-93

ԳԻՂՐԻ Շ. Վ. ԱՐՄԵՆԻԱՆ
(Ա.Ռ.Ա.ԶՆՈՐԴ. ԹՐԱԿԻՈՑ)

248



ՀՈՎՈՒԹԻ ՊՈՍՔԵՐ

ՈՒՆՉՈՒԱԾ

ԹԵՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՈՒ ԴՊՐՈՅԻ

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

ԵՒ

ԲՈԼՈՐ ՀԱՅ ՃՈՂՈՎՈՒՐԴԻՆ



Հ Պ Հ Օ Հ Օ Հ



Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ Յ. ԳՈԶՈՒՆԵԱՆ

ՄԵծ-Հռոմ Խան, քր. 45

1912

2010

ԱՐՏԱԶՈՒ

ԿԱՐԱՊԵՏ Էֆ. ԱՐՄԱՆԱԿԻ

ՕՐ 6 ԽԱԿԱՏԱԿՈՒԵցաւ 1896 Սեպ. 8. Թիմիկանի

Եռորդ դէպֆին



Հայր.

Երբեակ պարտականութիւններուդ կատարումի ճամբուն
մէջ, ահա քանի մը անիրաւ գնատաններ կուզային աննենգ կուբծքդ
ծակծկել, այն շրջանակէն, որը միայն կազմուած է Հայրենիքի
ու Արդարութեան պաշտպանումին, եւ չէ թէ անմեղին ու ան-
զնին հանդէս մարդափառշոշ վայրենութիւններու։ Այդ պահուն
իսկ նորէն ցոյց կուտայիք նոյն անկեղծ վերբերումը պարտա-
կանութիւններու բաժնին, ու նոյն քաջութիւնով եւ համբերու-
թիւնով կը կատարէիք վերցին պարտքերնիդ ալ Գերազունին որ
կը տեսնէր, կը լսէր ու կը հոտոտէր նահատակուող ժողովուրդի
մը հոգեվարքը արիւնոտ, բողոքող հողէ ու քարէ անկողիններու
գրիէն ու ծխացող ու խանձուող քնակներէն ու մարմիններէն։
Բայց բաւ էր որ զուք՝ կամուխէն ըմբռնած էիք մարդուն ընկե-
րային, կրօնային ու ազգային պարտականութիւնները, եւ երբ
ճանը ծեղ կոչեց մարտիրոսավայրին, հոն փութացիք աներկիւղ
ու հաստատ քայերով, եւ առիք մարտիրոսաց փառապսակը։

Ահա սոյն Հովուի Խօսմերը, որ ուղղուած են թեմիս եւ
բոլոր Հայ Ազգ. եւ կրօնի պաշտօնէից ու ծսղովրդին, եւ որոնց
ցոյց տրուած է ընթանալ, վարել, վարիլ այնպէս, ինչպէս որ
պարտը կը զնեն ընկերային, կրօնային ու ազգային պարտակա-
նութիւնները, կուզամ սրտէս ծօնելու ծեր անզին Յիշտակին։
Վատահ եմ թէ հոգիով պիտի յայտաք, երբ՝ հովուի պարտաւո-
րութիւնովս ինծի յանձնուած հօտ մը դէպի այդ երբեակ պար-



3970
47
81690-ամբ

տականութիւններուն կ'առաջնորդեմ, կամ զոնէ այդ ճամբան ցոյց կուտամ:

Դուք ծեր կեանքի օրերուն անծով, ժամանակով, դրամով, պատկառանքով այդ երբեակ պարտքերնիդ կատարեցիք եւ մշտ: Եցիւ թէ ծեր հօրենական այդ ազնիւ ու ազգու դասերուն իրապէս աշակերտող, պարտաւորող եւ հետեւող մը լինիմ: Զեր յիշատակի անշնչելի նկարն ու պատկեր իր խորազգեցիկ ու վեհազգեցիկ տպաւորութիւնով քանդակուած է սրախ մէջ, այն ազգասիրական ոգւովը որ ցոյց տուիք հազարաւոր խուժանին եւ կազմուած Զինուորական Ատեանին ժամանակ, ու տարիք ամէն թշնամական արարք, ու զնտակ ընդունեցիք: Ահա այդ պատուական ու պատմական յիշատակը մեզի միշտ պիտի զգացնէ, ցոյց տայ թէ՝ մարդ կամ պաշտօնեայ պէտք է իր պարտականութիւնն ու անմտութիւնը տանի մինչեւ բարձրագոյն զոհութեան:

Հայր: Ընդունէ Ճովուի Խօսիերս իբր որդիիական պարտականութեան ու երախտազիտութեան առհաւատչեայ, զոր զաւակդ ամենայն ակնածանօք կը մատուցանէ քու անմոռաց յիշատակին ու խայտացող հոգիին:

ԳԵՂՐԳ Շ. ՎՐԴ. ԱՐՄԱՆԵԱՆ



ՍԻՐԵԼԻ ՄԵՐ ՃՈՎՈՎՈՒՐԴԻՆ

Աննախընթաց միօնց մը չէ, որով կ'ուզեմ ժողովրդեան ։ օսիլ ո՛չ լոկ խօսեով, այլ բղրով. ու սա՛ ինձի համար նուիրական պարտականութիւն մը սեպեցի: Նա որու է քե խօսենքը շատ անզամ կը բռին բեւարփու եւ աւելի արագ կը գնան մոռացութեան մեջ հզ քաղաքելու, վաղուան պատմութեան մեջ հզ մը խսկ չգրաւելով. նոյնչափ ալ ազդեցութիւնը տեւական հանգամանն մը չսիսի ունենայ, ինչպէս բուդրինը մի՛շ ունի եւ ամեն օրի համար կը խօսի եւ ամեն տարիի համար կ'ազդէ ու կը սպաւորէ:

Այս պարտաւորութիւնը մեր նախմեաց օրերէն եկեղեցի Ս. Հայրենէն ու հօսապետներէն ցիովիւն շարունակած է ու կը շարունակէ, եւ բուականը կը գնայ մինչեւ Առաքելական դարու պատկառելի հնութիւնը, երբ՝ անոնք ալ իրենց կարգին ու պատօնին մեջ ունեցան բրբեր ուղղուած ժողովրդեան. ժողովրդեան մը՝ որ նոր կրօնով եւ նոր կեանով ծնած՝ պէտք ուներ խօսի, եւ խօսին աւելի բղբերու, որոնիք պիտի խօսին ամեն օրի, տարիի ու դարերու ա՛և բարի խրամներէ, սիրոյ սրբութենէ, ազնիւ պարտականութենէ, առաջնորդող կանոններէ, սրբազնող հրահանգներէ, հաստա ու սոկուն Շաւատէ, մաքուր կենցաղէ:

Եւ ամեն ժամանակի համար ալ կրնանք ընդունիլ քե կեանքի պայմանները կարգ մը փոփոխումներով եւ քե առաջ տարբեր երանգներու ու փուլերու մեջ մտած

Են եւ կը մտեն, մանաւանդ ապրելակերպի, վարելակերպի. բաղաբակրութեան ու բաղաբակարութեան, զգացումի ու զաղափարի, եւ դեռ զիրար հակասող շատ մը պահանջներու, պէտքերու բարդ բարդ հիւսուածքները՝ բո՞ղ ըլլան անհատականին, բող ըլլան ընտանեկանին՝ կը կը ծնին դժուարութիւններ եւ շատ անզամ անլուծելիութիւններ, երբ որու հասկացողութիւն, գիտակցութիւն, եւ դիւրենտել եղանակ ի ձեռին եւ ի վիճակի չեն լինիր ամեն ժաղովրդեան համար:

Ահա՝ այն ատեն երկու ծայրագոյն եղբերուն մէջ միջին եղք մը գտնելու դժուարութիւնը մէջեղ կուգայ, զի կարեի չէ ծայր աստիճան յետամեացութենէ լաւ արդիւնքներու ակնկառոյց ըլլալ, եւ ոչ ալ ծայր աստիճան յառաջդիմութիւններէն՝ առանց պատրաստուած ըլլալու՝ բարիքներ սպասել: Ոչ մեկը իր դանդաղկոտութեանը մէջ քողնելու է, եւ ոչ երկրորդը ուժէ ու կարողութենէ վեր աւելի յառաջ մղելու անօգտակար նիգերն ունենալու է: Միջին համբան յարմար գիտութիւնն է. խոհեմութեան, չափաւորութեան կրութիւնը ե՞ն առողջ դասիարակութիւնն է, յաջողութեան զաղտեիքն է, եւ աստիճանազարդ վերելակն է միւս դեպ ի բարձրացում, առանց երկիրը ունենալու յետամեացութեան, եւ ո՛չ ալ ծայրայիշ չափազանցութեան խլրումը:

Սա՛ աղօքեով՝ «Իմ անձին մէջ զօրութիւնոյ զիս ուժովուցիր» (Սաղմ. ձլ. 3) պէտք է իւրաբանչիւր պատասխանառու պատօնինայ եւ անձ աշխատի, նզնի, բարոգէ, զործէ, վարէ. վարի ուժով մը՝ խմասուն, նօմարիս, բարի, համբերատար եւ դիմագրաւող. զի ուժը ե՞ն պիտին ու գլխաւորն է. ու ա՛ն է որ ամեն պարտերու կատարումին պիտի օգնի ու ծառայէ. ա՛ն ուժովն է

որ նաւավարը իր առագաստը կը պարզէ, դեկը կը կառնալարէ, կատղած ալիբներու դեմ շատ անզամ կը պայտարի. ան ուժովն է որ կեանի կորիկն ու պայտարին մէջ շատեր անյողողողի, անվեհներ կուրծք կուտան ու կը յաղրէն. ա՛ն ուժովն է որ անզին հսկայ շենքներու նորոգութեան, կանգնումին լծակը կը շարժի, իր հիացուցիչ պատօնիր կատարելով:

Յովիաննես Առաքեալ իր բղբին մէջ կ'ըսէ. «Գրեցի ձեզ երթասարդներ, ինչու որ ուժով եք». այո՛, ա՛ն ուժովն էր որ շատ մը մարտիրոսներ ու նահատակներ անլուր չաշշարաններու, անտանելի տառապահներու, անուշի տանշանեներու առջև սիրայօժար համակերպեցան, եւ սոսկափ դահիճներու տապարներուն ու լախտերուն տակ խաջաբար տարին ամենը, եւ այն օրերէն ցայսօր աննելուն ու անյողողողի նօմարտութեան վկանները եղան, փառաւորեցան ու փառաւորեցին, արժանանալով երանաւու գրախիսի կեանիին:

Այս ուժովը գործելու է, եւ գործելու են մեր բեմի եւ բոլոր Արժ. համաները. այս ուժովը զօտպնդուելու են մեր բեմի Պատ. Թաղական Խորհութի անդամները. այս ուժովը ամեն խոշնեցներու դիմադրելու են ամեն Պատ. Ռւսումն. Խորհութի, Հոգաբարձու եւ Տեսուչներ. նոյն ուժով մեր ամենապատուական ուսուցիչ ու ուսուցչունիները վարելու են դպրոցները, մաֆուր, լուրջ ու սուրբ դասիարակութիւնով, եւ կրելու են ապագայ բանիմաց ժողովրդի ներկաները (ուսանողութիւնը): Այո՛, այս ուժով մեր ընտանիքներ ամեն (ժողովուրդ) պէտք է կեանի հրապարակին մէջ աշխատին նոյն ոգւով, նոյն եռանդով ու պատուաւորապէս աշխատին, հասցնելու

համար չարքա՛, տոկուն, ձեռներէց, ինքնալսահ, ինքնաշխատ, ամենի դեմ պատրաստակամ ժողովուրդը:

Հայրեւ այս ուժով զաւակներ ու ընտանիք կառավարելու են, այրեւ մաքուր կենցաղով իրենց լնակիցի հետ դրախտի զոյզը պէտք է կազմեն. կիներ ալ Առաքեալին պատուիրածին նման համեստուքիւնով ու պարկեւտուրիւնով պէտք է բալեն եւ գուծակցին տան բոյնին կազմուրեանը, ու մայրեւ՝ պատուական ու տնաւեն, ազգաւեն զաւակներ հասցնեն մեծ Ընտանիքին: Տղաներ ու աղջիկներ ըլլան տիպար զաւակ ու անհատ, կիրք ու կենցաղագէտ, ու այսպիսով պատրաստուին մարդկութեան, հայրութեան եւ մայրութեան:



ՀՈՎՈՒԻ ԽՈՍՔԵՐ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արժանաշորչ Քաջարաձ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

«Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որը տուան քեզ մարգարէութեամբ ի ծեռնադրութենէ երիցութեան: Յայդ խորհեաց եւ ի դոյն կանխեսչիր, զի քո յառաջդիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի: Զգոյշ լինիչիր անծին եւ վարզապետութեան, եւ ի դմին յամեսչիր: Յայդ եթէ առնիցես, եւ զանմն ապրեցուցես եւ զայնոսիկ՝ որք քեզն լիցեն»: (Ա. Տիմ. Գ. 14-16):

Կանխաւ գիտցէ՛ք, գո՛ւք, երկնաւոր մեծ Քահանաւ յապետին երկրաւոր փոխանորդներդ, որ ձեռնադրութեան չնորհիւ ունեցաք այդ չնորհը ըստ կարգին Մել խաւդեկի: Միշտ ի մափ ունեցէ՛ք թէ՛ անկողոպաելի զարդերով զարդարուած էք ընդ տեսլեանն Մովսէսի և ընդ պատմուճանաւն Ահարոնի: Խոկացէ՛ք գո՛ւք թէ՛ հոգեզարթուած էք ըստ Առաքելոցն խորանակցութեամբ, և եղի՛ք ու ընդ միշտ՝ մինչ ցգուռն գերեզմանի՛ մըշակներ առանց ամօթայ, զի գու-ք պիտի ընդունիք յերեւիլն Քահանայապետին զանթառամ պսակն փառաց :

Պատուական եղբայրնե՛ր, մի՛ մի՛ անփոյթ գտնուիք, երբ չնորհ մը ունիք, չնորհ մը՝ զոր ընդունեցիք ձեռանադրութիւնով, չնորհ մը՝ որ Աստուածային է, ձեր մեծ Քահանայապետին է:

Պատուական երեց. լաւ և շատ խորունկ մտածիր, և լրջութիւնով ու ուշադրութիւնով խորհիր. ու այդ չնորհը մի՛ ապաշնորհութիւն գործեր, այլ ամուր և պինդ փարէ, ու պահէ զայն՝ զլիփո հովանի, սրտիդ՝ զարդարանք, և հոգիիդ՝ աւանդ. ատով գործէ՛, աշխատէ՛, սպասաւորէ՛ և արդիւնաւորէ. անանկ որ քու բոլոր ժողովուրդդ տեսնէ, լսէ ու հաւատայ, ազգուի, խրատուի ու պատկառի:

Այո՛, քահանայութիւնը մի երկնառաք պարգևեւ է, հոգիի հարստութիւն է. անմնք որ սրտի յօժարութիւնով, հոգիի պատրաստութիւնով ընդունած են և ուխտած, պէտք չէ դրժեն: Գիտնալու են թէ շատեր ցանկացան ու կը ցանկան, բայց քիչերն են որ կ'արժանանան: Սիրելի եղբարք, մի դրժէք ձեր ուխտին, զի ուխտեցիք Առաջի Աստուծոյ, Ս. Սեղանին ու Խորանին, և հաւատացեալ բազմութեան մը ներկայութեան:

«Ուխտս զիք և կատարեցէք»: այս համարը մի մոռնաք. ի՞նչ յանձնաստ թիւնով, յօժարութիւնով ու պատրաստութիւնով որ ընդունեցիք, միանուագ և միօրինակ, անայլայլ ու անխարդախ քալեցէք ա՛յդ ուխտ ճամբէն: Գիտցէ՛ք թէ՝ պաշտօնիդ բարձր է, վսեմ ու սուրբ է: Ձեր լուրջ, խոնեմ, զգոյշ, բարի, ափնիւ, անկեղծ ընթացքովը պահեցէ՛ք այդ բարձրութիւնը, ձեր աննենդ, անխսակալ, պարկեշա, համեստ, խոհական կենցաղովը ունեցէք այն վսեմութիւնը. ձեր մաքուր, անարատ անբիծ, խաղաղասէր, անշահասէր, խոնարհասէր կեանքու-

վը սրբութիւնը փայլեցուցէք: Ուրեմն մի՛ տայք տեղի գայթակղութեան, ո՛չ փառասիրութիւնով և ո՛չ պիճնասիրութիւնով, ո՛չ շոայլութիւնով և ո՛չ ժլատութիւնով, ո՛չ աչառութիւնով և ո՛չ անարդարութիւնով, ո՛չ ագահութիւնով և ո՛չ արծաթսիրութիւն պատճառ է ամենայն չարեաց» ասէ գիրն. «Եզլ եղերուք մշակ առանց ամօթոյ, հեղ, խոնարհ, բարեսէր, անաչառ և արդարասէր. պարկեշտութեամբ կենաց ձերոց և բարեպաշտութեամբ օրինակ լերուք միմեանց և ժողովրդեանն Աստուծոյ:» Զի այսպէս ասէ Առաքեալն. «Զերիցունս այսունեամ աղաչեմ, իբրև երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանգերձելոց փառացն յայտնելոց հաղորդ: Արածեցէք որ ի ձեզ հօտպ է Աստուծոյ, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինիլ օրինակ հօտպն:» (Փետ. Ս. Թղթ. Ե. 1-4:)

Տեսէք, քահանայ եղբայրներ, ո՛րպիսի պարտքեր կը ծանրանան ձեր վրաց, և ո՛րպիսի պարծանք ու պսակ կը սպասէ ձեզի. մէկը միւսին ծնունդն է, և օզգակաւոր է, պարտականութեան մը վարձքը պարտականութեան մը կատարումն է: Ձեր պաշտօնի կիրառմանը անցեղի օրէնքը ըրէք միշտ ուրիշին՝ այսինքն հօտին իրաւունքը, շահը տեսնել, յառաջդիմութեանը ջանալ. եթէ նոյնինքն ձեզի համարած շան ալ կորունցնէք, զա՛ կորուստ չէ, այլ իրական շան. այդ ձեզի սիրելու պիտի առաջնորդէ, և զիացէք որ տիեզերքի մէջ ամինէն զօրաւոր բանը սէրն է. զի Աստուծ սէր է: Լաւ զիացէք թէ մարգերէն բարձր եղող մէկ մասը ինկաւ, խկ միւսները խնդութեան և երանութեան մէջ կը ցնծան, և յաւխաենապէս. վասնզի մէկ դասը

երբ աէրը հանդէպ Բարձրելոյն մոռացաւ, անհնազանդութեան տարուեցաւ, որով կորսնցուց երանական կեանքն ու խնդութիւն :

Դուք եւ ամէնքս, երբ այժմ լոյսի մէջ կ'ապրինք, նոյն այդ սիրոյ արդիւնքը չէ՞ . զի Աստուած այնչափ սիրեց մարդկութիւնը, մինչեւ որ իր մէկ հատիկը ղրկեց: Աստուած միթէ տարրեր ճամբով մը չէ՞ր կրնար իր սիրոյն պարգեւը չնորհել մեզ. նուազ իմաստութիւնով չէ՞ր կրնար մեզ զարմացնել, արդարութիւնով չէ՞ր կը նար մեղքը մեզի զգացնել, կամ իր զօրութիւնը մեզ չէ՞ր կրնար վախցնել: Բայց մինակ, այո՛, մինակ անսահման Սէրը, նոյնինքն Խնքը կրնար սրտերը փոխել, գերել, իրը ընել. ու մինք զանի պէտք է սիրենք, զի Ան մեզ սիրեց իր մէկ հատիկը պարգեւելով: Ահա՛ ամենուս բարոյական վերականգնումին բացարութիւնը, և գորաւորագոյն ուժքը զոր գուք պիտի կրնաք ի գործ դնել այն ուժին նման, զոր Աստուած ունի: Այդ ուժով, այդ զօրութիւնով պիտի կրնաք հօտերնուդ նկարագիրը ձեւակերպել, քրիստոնեայ անհատը կերտել, ընկերասէր մարդը պատրաստել, հայրենասէր զաւակը հասցնել. այդ սէրն է որ ձեզ պիտի տանի մինչեւ անձնութրութեան ու անձնազնութեան ճամբուն, ու մինչեւ Խաչի Գողգոթան: Եթէ՛ հօտին սէրը ձեր մէջ պակսած, հատած, սպառած է, չպիտի ուզէք գիմաղը այն փորձութիւններուն, որոնք կը խուժեն ձեր ու ձեր հօտին վրայ՝ ամէնքգ փարատելու ու փողստելու համար. ահա այն զօրութիւնին զատ չունիք ուրիշ մը որ ձեւակերպէ ձեր մէջ այն կեանքը, որ ուրիշներուն համար ալ ըլլայ և ինքինք դրալի ընէ ուրիշներու կեանքին մէջ: Այդ զօրութիւնը Յոհանքս պիտի ստանաք, եթէ ոչ դուք ձեր

շուրջը բարոյականի մաքուր միջնուլորտ մը ստեղծելով, և անոր մէջ ասլիելով շարունակ, ինչպէս բժիշկ մը՝ առողջապահութեան բոլոր պաշարովը՝ տարափոխիկ ու մահացու հիւանդութիւններուն մէջ:

Մի՛ գուցէ վարակուիք ու վարակէք կեսնքը ախտավարակ փառասիրութենէ, աղայամիտ պճնասիրութենէ, անհաշիւ շռայլութենէ, ագահի ժլատութենէ, անմտածի մնարդարութենէ, կեղծաւորի աչառութենէ, գինեսէրի արբեցութենէ, որը անձով ու զրամով, կեանքով ու պատուով, սրտով ու հոգուով ձեզ պիտի փճացնէ, անբանացնէ և մինչեւ մահացնէ ու ձեր ետեւը թողնէ Ջլախտաւորներու խմբակ մը, հիւծախտաւորներու երամակ մը և թշուաններու շարք մը: Ասոնք ամէնքը, մանաւանդ արբեցութիւնը և արծաթասիրութիւնը ամէն չարիքի ծնողն են և մանաւորապէս նւեիրական պաշտօնէցդ բացարձակ մահը: Կանգնելու ձեր բոլոր ձիգերը, և վեր բարձրանալու փափաքները, միտումները, օգտակար հանդիսանալու տենչերը պիտի մարին, պիտի չնջուին ինչ որ ազնիւ, բարի ու գեղեցիկ են ձեր մէջ, ու ա՛լ ծայր պիտի առնեն գայթակութիւնները. համակրութիւնները պիտի զարդին, յարգանքները պիտի նուազին, փոխագարձ սէրը պիտի ստոի ու մշակը առանց ամօթի՝ ամօթի մէջ պիտի ինկնի, ու զլիսահակ վար պիտի նայի փոխան վերի:

Հայ Եկեղեցիկ մշա՛կ:

Օրէնք ու պատուիրան քարոզող, Խաչ ու Աւետարանի գրօշակիր, հեզ Եղի՛ր ու բարեհամբոյր, խաչ կրող ու Աւետարանի խմական զաւակ, զի այս է պատուէր առաքելական, այս է հրաման Քահանայապետի:

Եղէ՛ք տիպար օրինակ բարեպաշտութեան, պար-

կեշտութեան՝ Աստուծոյ ժողովրդին։ Առաքեալը ձեզնից այս կը սպասէ և վկայ կը բերէ Քրիստոսի չարչարանքը։ Այն դարձն ցարդ նոյն կոչն է ու սպասումը ամենուս , թէ արածեցէք Աստուծոյ հօտը , որ ձեզի յանձնուած է , և կրկին նոյն պատուէրը . «Գնացէք այսուհետեւ , աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. իր. 19.)։ Սիրոյ աննման վարդապետին այս պատուէրը , հրամանը , հրովարտակը ամեն դարի , ամեն տարիի և օրի համար է , և ամենուս որ ոտանձնած ենք հովուութիւնը մեր հօտին , ու այն զօրութիւնովը որ Յիսուս տուաւ , «Զօրութիւն պիտի առնէք ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք»։

Փրկչին համար վկայ ըլլալ , ահա՛ նպատակը քարոզութեան ու ձեր ուխտի կոչման , որուն համար զօրութիւն չնորհել խոստացաւ Տէրը , և ասար համար կանչեց իր աշակերտները և ձեզ որ իր աշակերտութեանը կանչուած էք , ու պիտի կանչէք դուք ալ բոլոր աշակերտողները : Փրկչին աշակերտները իր վկաներն են , ու ահա՛ անսնց բոլոր գործը , և ուրիշ ոչինչ : Երկու աշակերտութիւն չէ կարելի . կամ՞ մին կամ՞ միւսը :

Ձեր կեանքին մէջ միայն մէկ բանի նուիրուած էք . Փրկչին ծառայել և ծառայեցնել , այսինքն քարոզել Վարդապետին Աւետարանը , ո՛չ լոկ խօսքով , այլ գործով , անձով ու համակ կեանքի օրինակովը : Տեսէք առաքեաները՝ որոնք թէև պարզ ձկնորսներ , վրանագործներ էին , բայց երբ Տիրոջը զօրութիւնը առին , բովանդակ աշխարհը Փրկչին լոյսովը ու գիտութիւնովը լեցուցին : Ասոնք հարուստ չէին որ առաստ նուէրներով շատեր իրենց աշակերտեցնէին . պաշտօնեայ չէին որ աջ ու ձախ

տիտղոսներ , պաշտօններ ու պատուանչաններ շոայլէին . ուժեղ անձեր չէին որ երկիւղի ազգեցութեան տակ համոզէին , ոչ ալ համալսարանականներ՝ որ ճարտար խօսքերով , փիլիսոփայի արամաբանութիւններով հրապուրէին . այլ սոսկ վկաները եղան իրենց պարզուկ կինցաղով ու գիտութիւնով , զի Փրկչին անսասան զօրութիւնը ունէին : Ասոնք երկրաւոր հանգիստ , պատիւ , փառաւորութիւն երբեք չխոստացան , այլ հրապարակաւ յայտարարեցին թէ՝ ամէն անոնք որ Վարդապետին հետևող պիտի լինին , պէտք է նեղութիւն կրեն , խաչ տանին , արհամարհուին , հալածուին , անարգուին , ապատակուին ու շատ անգամ ալ զրկուին երկրաւոր հարրապութենէ , որ ունին : Եւ դարձեալ զիտենք որ յաջողեցան , զի անոնց վկայութիւնը ազգեց : Շատ ու հազարաւոր մարգեր տարբեր տարբեր համոզումներ ըրած են շատերուն , բայց չեն յաջողած : Ասոնք ինչո՞ւ կրցան յաջողիլ , անանկ որ ապշեցուցին շատերը . վասն զի Սուրբ Հոգիին զօրութիւնը առած էին ու ատավ կը վկայէին , ողջոյն կեանքերնին գործին տուած որուն կամչուած էին :

Դուք ևս Սուրբ Հոգիին զօրութիւնը առած էք . պէտք է այդ զօրութիւնով գործէք և կեանքերնիդ ամբողջ նուիրական այդ գործին յատկացնէք , և ի՞նչ զարմանալի արդիւնքներ յառաջ պիտի գան : «Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք»: Եւ ասի՞ ձեզի , ամենուս ու ամէն Քրիստոնէի կը վերաբերի . միայն ձեւապաշտութիւնով և զիւրին միջոցներով պէտք չէ որ վկայենք , կամ անուն մը կրենք լոկ , ու չետեւինք բուն վկայութեան : Այո՛ , կայ այսօր վկայողներու բազ-

մութիւն մը , նոյնպէս և վկայող պաշտօնեաներ որոնք պատրաստ են , նման ընդգուած գնացող թափօրին որ «Ովսաննա» կը գոչէր , երբ Փրկիչը յաղթանակաւ Երուսաղէմ կը մանէր , և որոնք ամբողջովին անյայտացան , երբ խաչելութեան աարուեցաւ նոյն այն յաղթանակաւ մուտ գործողը :

Դուք որ սահնձնած էք վկայութիւնը , աշակերտութիւնը , հովուութիւնն ու սպասաւորութիւն Աստուծոյ հօտին , նայեցէք վեր , նոյն այն Յիսուսը , աշխարհի ազատիչ , գերութեան շղթան քակոլ , խաչիւ աշխարհի յաղթողը , աչերը՝ դէպի հեռուներ սեւուած , մոայլ չունի ճակախն և ո՛չ թափիծ՝ լուսացայս այսերուն , այլ միշտ կեանքի ժպիտ մը , յոյսի ցող , սիրոյ ծով ունի , միշտ աստուածացած , իսէր մարդկաւթեան մարդեղացած և յաւիտենապէս :

Զէք լսեր ի՞նչ կ'ըսէ .—Գնացէ՛ք հօն՝ ուր ձեր անձ նուէր հովուութիւնը , աշակերտութիւնը , սպասաւորութիւնը երկնք պիտի հասցնեն ցնծութեան աղաղակները . ու հոն՝ դարբին պիտի տրամութիւն , ցաւ , հեծութիւն , ու չպիտի կրնան հասնիլ մինչև վերերը , երդուք շրջան առնէք , մուտ գործէք ամէն տուն ու ամէն տեղ , և խաչաբարձ օրհնէք ձեղի յանձնուած հօտը : Արածեցէք սրբութեան , մաքրութեան ու կատարելութեան մշտադալար մարգագեախներուն վրայ , ու հովանաւորեցէ՛ք մշտական ձիթենիներու տակ : Եկեղեցիի պաշտօնեանե՛ր , գնացէ՛ք . տաճարի ծախուածներ , ժողովուրդի նուիրուածներ , աշակերտեցէ՛ք , քարողեցէ՛ք մինչեւ լեռնանման անմատոյց ժայռ սրաերուն , անպատացած աւագոււ հոգիներուն խորերը , մեղքի լեզունութիւնով ծովացած կեանքերու , ապականութեան

վերքերով լի անձերուն , անոնց՝ ուր ձեր ծառայող , գործող , քարողով սպասաւորութիւնը , անձնդրութիւնը , հրեշտակներուն հաւցնէ նորազուարթ նոր մեղեղիները երջանիկ ինգութիւններուն . ու հոն պիտի դազրի մեղքի ժահըրը , յանցանքի թոյնը , փլատակ աւերակոյտ դարձած կեանքերու ողարմելի տեսքը , ու ա՛լ չպիտի քայքայի , չպիտի քարանայ , անապատանայ , ծովանայ :

Գնացէ՛ք , մի՛ գեղեւէք , զի քաջ ծանօթ էք թէ՝ մեծ խորհուրդը վաղուց իրականացած է , սքանչելի հրաշալիքը յայտնուած , ճամբան պատրաստուած , ուղին յարդարուած , եղբայրութեան գաշն կուած , փուշն ուստատակ վշաքաղ եղած , մեղքը կորած , յանցանքը կապտուած ու աշխարհը յաղթուած , գերին աղատուած , սարուկը փրկուած , բարբարոսը ինկած , սատանի բռնակալութիւնը կալանաւորուած : Այսունեսեւ աշխարհի —մեղքի— իշխանը փախուստ պիտի տայ ձեզի հետ մոռքառելէ , ու արքան՝ ճակատամարտելէ , բռնակալը՝ ահաբեկելէ , մոլեզին ամբոխը՝ կատաղի մարտելէ , ու մոլեռանդութիւնը՝ տիրապեսելէ : Դուք պիտի արձանացնէք , ներկայացնէք այն պատկերը , որուն վրայ յաւիտենական քահանայապետութիւնը զրոշմուած է , ու ձեզմով ձեր հետագաներն ու դարերու հոլովոյթքը՝ նոյն այն անեղծ ու տիրական պատկերովք : Յիսուսի Աստուածային այս պատուէրը ո՛րչափ քաղցրօրէն նոյնչափ պատկառելիօրէն , որչափ եղբայրաբար նոյնչափ հայրաբար ու տիրաբար պէտք է ձեղ և ամենուս մշանջենի տպաւորութիւն մը գործէ ու անջնջելիութիւն մը : Սա՛ պարտք ու պարտաւորութիւն շեշտող , բնորոշող ու յաւկանչող «գնացէք»ը , որպի՛սի սուրբ և նուիրական առաքելութիւնով , մարդասիրական և հայրենասիրական

3910



նախանձախնդրութիւնով քարոզելու էք անոնց, և զանոնք երկնապատուէր այս հրամանով մլրտելու էք, որոնք գեռ խաւարին մէջ կը խարխափին, դարաւոր գերութիւնով կը տառապին, ստրկութիւնով կը տուայտեն, թշուառութիւնով կը տապկուին, կը չարչարուին, կ'երկմախն, կ'արդիանան:

Գնացէք, մի՛ զանգաղիք, մի՛ երկմտիք ու յուսահատիք, այլ քարոզեցէք հաւատով, ոչ թէ թոյլ ու երկդիմի խօսքերով, հապա անձին օրինակով. մլրտեցէք ոչ թէ լոկ ջրով, հապա Աստուածային ձշմարտութիւնով, որ մաքրուին, սրբուին ու նուիրազործուին, Ս. Հոգին անոնց մէջ գործէ, բարձրագոյն ոգին ներչնչէ. ու ահա ա՛լ պիտի դադրի չարն ու դաժանը, յանցանքի սասակութիւնն և մեղքի ծանրութիւնը, մախանքն ու ատելութիւնը, դաւն ու սպառնալիքը. պիտի խորտակի ամբարտաւանսաթիւնը. պիտի վերնայ ամբարհաւաճութիւնը, պիտի տապալի անիրաւին, ագահին արծաթսիրութեան տիրապետութիւնը. պիտի չնջուի կապուտն ու կողոպուտ, թումքը կանգնի խենէչի լկակ բարոյքին, անբարոյ մտածումին, յայրատ նայուածքին. պիտի կարկի կարկամի շղոմ շղոմքորթին լեզուն, խանձին ու խանձրկին զրպարտողի, բամբասողի շրթներ:

Հօրը, Որդիին, Հոգիին անունովը նուիրազործեցէք հօտը, որպէս զի թշուառ մարդկութիւնը երջանկանայ, ինկած բարքերը ազնուանանան, կոտրած սրտերը շինուին, լքուած հոգիները կենդանանան, բարոյական իշխանութիւնը հաստատուի, հոգեւոր թագաւորութիւնը ինքնակալէ, անիրաւներ իրենց զիրքէն խախախն, անիրաւածներ իրաւունքի տէր դառնան, հպարտներ ցածնան, գոռոզներ խոնարհն, խոնարհներ բարձրանան, պարարողներ քաղցին, անօթիներ կշտանան:

Դուք առաջուան երկչուները, անյօյմները չէ՛ք, երբ Սուրբ Հոգինովը զօրացած էք. «Այսուհետեւ»ը ձեզ արթընցուցած է և ամրապնդած. այդ բառը յաջողութիւններու հաւաստիքն է, յոյսի գրաւականն է: Երէկուան տկարներդ այսօրուան ու վաղուան զօրաւորներն էք. ձեր սրտեր նոյն զօրութիւնով բարձրացած են աշտարակներու հանգոյն, ուրկէ կը տեսնուի հեռաւոր ու փառաւոր ապագան:

Գնացէք: Երբ յագնիք, նոյն այն անուշ ձայնն է որ պիտի համնի ձեզի, երբ պարտասիք միեւնոյն սրտապընդող «Այսուհետեւ»ն է որ պիտի արձագանգի. զրժուարութիւններու խոչն ու խութը երբ բերդանայ առջեւնիդ, ահա՝ աշակերտի ու քահանայի ստանձնած պարաքի բեռն է որ պիտի զրդէ ձեզի, ու քալեցնէ քարոզելու ամեն սրտերու, որոնք մշտնջենի լոյսէն դուրի, յաւիտենին ձշմարտութենէն անդիտակ, ընդունակութիւն, լոյս, յոյս, կիրք զիականացուցած են:

Կենդանացնելու համար մլրտել պէտք է Հօրը անունովը որ անվախճան Արդարութիւնն է, Որդիին անունով որ անվերջ Սէրն է, Հոգիին՝ որ անհասանելի իմաստութիւնն է. և ահա երեքը ի մի երրորդացած, պիտի շնորհնեն ընդունակին, խնդրովին, վինսուողին սրտի երրորդութիւնը՝ հաւատ, յոյս, սէր, փոքրիկ՝ այլ շատ մեծ հանդանակը: Անվախճանին լուացումով, անվերջին օծումով ու անհասանելիին զրոշմովը կեանքի ամբողջութիւնը պիտի սրբուի, նուիրազործուի, որով կեանքեր ինկածութենէ, պատիւներ ստորնացումէ, գաղափար ու զգացում ժանգոտութենէ, տուն և ստացուածք աղտոտ խարդախութիւններէ մաքրուած ու ազատուած, սրբութիւն պիտի բուրեն:

Աշակերտի մը պէս ցուազը ձեռքերնիդ , առաքեալի պէս մախաղ ուսերնուդ նուիրուեցէք բոլորանուէր ժողովորդի ցաւերուն , հօափ քայքայումներուն , անսակւներու գրկին ու գոգերուն . բարձրացէք սիսալներու , թերացումներու բրգացած աշտարակներուն վրայ . իջէք խորը ցաւած սրտերու , այրիացած ու այրած հոգիներու ծալքերուն , ուր բոյն ու ոտք գրած են կայծկառող վշշտերն ու անհատնում սուգեր , ու նոյնչափ անտեղի կրքերու , նախանձատէրի վէճերը՝ անվերջ քինավիճնդրութիւններով : Ա՛լ աշակերտեցուցէք սրտի հեթանոսութիւններ , ջարդ ու փշուր ընելով ամբարտաւանի , հպարտի ու անհաւասափ կուռքեր , և անմիջապէս մկրտեցէք Յանուն Հօր և Որդոյ և Հոգույն Սրբոյ : Ճականներու անբծութիւն զրօշմեցէք , սրտերու անմեղութիւն խաչանցէք և հոգիներու սրբութիւն քամեցէք . կանգնեցուցէք սրտի տաճարներ , նորոգեցէք հոգիի սեղաններ , աղօթքով , խունկով ու անոյշ իւղով օծեցէք , և սորպեցուցէք . «Այսու ծանիցեն զձեղ թէ իմ աշակերտք իցէք , եթէ սիրիցէք զմիմեանս» :

Տիրոջը օծեալները . գուշք աշակերտ էք կենաց Բանին ճշմարտութեան , և քարոզիչ , սպասաւոր էք տաճարին , վերակացու հովիլ էք և հայր բանաւոր հօախն , միջնորդ էք խաղաղութեան և հոկիչ : Ու դեռ որչափ և քանի պարտքեր ունիք ուսերնուդ , ու քանի բազմազան ու զանազան սիէտքեր կան աջերնուդ ու ձախերնուդ , նոյնչափ ծանր բաժիններ պատասխանատութիւններու : Կարդացէք միշտ , և ուշ զրէք Հին և Նոր Կտակարաններու ընթերցուածներուն , և սոսկացէք ու դողացէք եթէ թերացեր էք , հոգեւորը ձգած աշխարհայնացեր էք : Լսեցէք մանաւանդ այն ձայնը , յարու-

ցելոյն թուականէն , Յիսուսի յաղթանակէն , պատուէրներու շեշտէն : Գնացէք ... ձիչտ միեւնոյն Աստուածային ձայնը , յազթականին պատգամն է , պահանջք , պարաք ու կամէութիւն . փութացէք բնդունելու և ունկնդրելու աշակերտորէն , եթէ ցարդ դանդաղած էք , առաքեալի զարերէն ու ձեր սրբազն հայրերու թուականներէն եկած պարտաւորութիւններու կատարումին ու խոստումին : Գնացէք , աշակերտեցէք , քարոզեցէք ու մկրտեցէք բանիւ և հոգւով : Դուք նախ աշակերտեցէք իսնարհութիւնով ու անպայման , որպէս զի ողջ ու ամբողջ ճշմարտութիւններու աշակերտեցնէք . նախ մկրտուեցէք արդարութիւնով , ու այդ պիտի բաւէ լծակ մ'ըլլալու՝ աշխարհ մը անիրաւութիւնները վեր վերցրնելու . հաստատուեցէք ու խարսխեցէք սիրով , որով կարենաք դարման տանելու ատելութեան ծնունդ բոլոր ցաւերուն ու ցեցերուն , իմաստութիւնով լցուեցէք , որավ վարէք հօտերնուդ բազմակնձիռ և փորձալի վիճակը : Տգիտութիւնը ծուխերնիդ վճացուցեր է , ժողովուրդնիդ ցրուեր , աղքերնիդ պառակաեր , անձիտեր , անջատեր , ու գուշք ձեր մէջն ալ գուցէ :

Ձեր շուրջը մեղաղբանքներ շատ են ու պարապեր են , պարաքեր զիգուած ու պատնիշներ են . ա՛լ աեսէք ո՞ր բահով , ո՞ր բրիչով պիտի կրնաք զանոնք հիմնայտակել : Անուն մը ներսէսի , Սահակի ու Մեսրովպի՝ չպիտի կրնան այդ գործը զիտիս հանել , եթէ գուք ներմէս մը չլինիք մեծնոզի և հայրենատէր , եթէ գուք Սահակ մը չլինիք մեծանձն ու խոնական , եթէ գուք Մեսրովպ մը չլինիք պարզուկ ու համեստուկ , բայց մաքով բեղուն , ժրածան ժիր մշակ և վաստակաւոր գրչի :

Եւ դեռ զիտէք միայն ներսէսներ , Սահակներ ,

Մեսրովաներ ու Դեւոնդներ չէին որ ձեր գասակարգի անցեալ փառաւորութիւնը պատմագրեցին անջնջելիօրէն. շատ էին ժիր, հեզ, ուժեղ ծառայողներ սրբակեաց, անձնդիր, մտքի բարձրութիւնով, սրտի մեծութիւնով, հոգիի մաքրութիւնով ժողովուրդ հովուող ու հովանաւուրող քահանաներ, Խաչով ու Սւետարանով Հայրենիքի պաշտպաններ, եկեղեցիի պարծանքներ:

Դո՛ւք ալ նոյն պարտականութիւններով Նախնիքներու շարունակութիւնն էք. Է՞ր կը տաստամիք. ջանացէք, փութացէք նոյն այն բարձրութիւնով, նոյն այն նուիրականութիւնով քարոզելու, ընթանալու ու գործելու, չէ թէ վարձուորի մը նման այլ պարտաւորողի մը պէս, չէ թէ լոկ շրթներով այլ կեանքի օրինակով, զի ձեր Տէրը՝ Քահանայատպեալ այդ օրինակաւ աշխարհը փրկեց, մարդկութիւնը վերանորոգեց:

Հասի՛ք հնի ուր վէճ կայ, քալեցէք հո՛ն ուր խազազութիւնը վտանգուած է, շտապեցէք հո՛ն ուր սէրը պակսած է, հաւատքը նուազած, յոյսը ջնջուած. հնի ուր արցունքը առուացեր, կեանքը գերեզմանացեր է: Թողէ՛ք հանգիստնիդ՝ անհանգստութիւններու գարման գանելու համար, տուէքիմիչնչեւ իսկ արիւննիդ՝ ճացած արիւնները ցամքեցնելու:

Դուք մեկուսի ու անընտանի մի՛ ապրիք թղթին ու գրչին հետ. գիրք ու գրիչ ընկեր ունեցէք, սորվեցէք ու սորվեցուցէք, ունեցէք ինսամուած ծրագիրներ աշխատութեան, զի ատով աւելի գերեցիկ արդիւնքներ պիտի վայելէք: Աշխարհի ամէն կողմ ու ամէն տեղ մեծ ջանքեր կը թափուին զարգացման համար. դուք ինչո՞ւ չընէք. կամենալը կարենալ է, սկսիլը լրացնել է:

Մեր մէջ կղերի աստիճանական գարգացումը նուա-

զագոյն չափով գուրա կուգայ, մինչդեռ անոնք գտնուելու են բարձրագոյն աստիճանի վրայ: Ինենազարգացումը պարտաւորիչ ընելու էի, զի ժողովրդային կեանքն ու կրնցաղը օրէ օր ամենաբարդ հանգամանքներու մէջ կը մանէ. ժողովուրդներու իմացական բարգաւաճումը աստիճանաբար կ'ածի. արդի մեր կղերի պաշարը չի կրնար զայն հակակուել: Գիտնալ պէտք է թէ ի՞նչ եղանակաւ կարելի է կրթել ժողովուրդը հոգեւոր կեանքին ու կրօնին մէջ. ի՞նչ պայմանաւ նոյն բարձրութեան, վեհութեան մէջ պահել պէտք է անկեղծ աշխատութիւնով ու վսեմութիւնով մեզի հասցուած Ա. Եկեղեցին, Եկեղեցիներուն լայնախոնը, պաշանի ու երկրպագելի ընծայել քրիստոնէական կրօնը՝ կրօններու պատուականը, մաքուր ու տոկուն պահել հաւատքը, վերջապէս ի՞նչ միջոցներով կարելի է ի գլուխ հանել այն ամենը որ վստահուած է ձեզի, ձեզի, որ ուխտած էք:

Ժողովուրդին մէջ չէ մնացած անայլալ նախնի ջերմեռանդ հաւատքը, և ընդհակառակն ուժացումներ կան. չեն մնացած այն սուլքը պաշտումն ու երկրպագութիւնը Տաճարին և Աստուծոյ հանդէպ. չէ մնացած Աստուծային սէրը սրակերու մէջ, անանկ ալ ընտանեկան սրբութիւններ, ընկերային համերաշխութիւն ու խալազութիւն: Դուք կը գտնուիք մեծ պատասխանատութիւններու հանդէպ. մինակ՝ ձեր անձնուիրութիւնը և պաշտօնին գիտակցութիւնը կը պահանջուի իբր դարման:

Եղբայրնե՛ր, ահաւասիկ այն դժուարութիւնները որուն կը հրաւիրենք և կը պարտաւորիք ձեր լուրջ ու շաղրութիւնով ու կամեցողութիւնովը. ու պիտի կը դաշտապահանել՝ հաւատքով ու գործով. ահա միփ-

թարութիւնը, ներքին յաղթանակը, որ պիտի ունենան արհամարհուած ու շատ անգամ նախատուած եկեղեցիի պաշտօնիւաները։ Դուք մեծ ուրախութիւն պիտի զգաք յաջողութիւններու ժամանակ, մինչեւ անգամ անանկ աշխարհի մը մէջ, որուն կարգը, կանոնը կատարեալ է։ Ճանչեք ձեր բուն գործին ու պաշտօնին էութիւնը, առանց սպասելու որ վայելէք անոր հետեւանաց վարձատրութիւնը։ Գործի ու պաշտօնի ճանաչումը անոր էութեան ու հետեւանքին բացարութիւնն են. և եթէ գործին հետեւանքը արդիւուի, աւելի խորունկ կերպով պիտի ճանչնաք էութիւնը։ Տարակոյս չունինք թէ Քրիստոսի կեանքը ծանոց կենսական պէտքը յաւիտենական, և ուրախութիւնը Աստուծոյ ծառայելու, և ընկերներու ծառայելու, և լնկերներու օգնելու մէծանձնութիւնը, անձնուիրութիւնը։ բայց Ան փողերով չնչեցուց տանիքներէն, և ոչ ալ սպասեց ծափերու ու վարձատրութիւններու. ընդհակառակն «Անիկա մարգոցմէ անարդուեցաւ ու երեսէ ձգուեցաւ»։ Առանց դժկամակութեան, անձնասիրութեան, շահասիրութեան, առանց երեւնաւու և արանջալու պէտք է օգնէք, շուա համնիք անոնց՝ ուսկէց բնաւ երախտագիտութիւն ու վարձք չէք սպասեր, և ընէք այն աղնիւ գործք զոր Յիսուս ըրաւ։ Թո՛ղ ձեր գործերը չճանչցուին, աշխատութիւնները չգնահատուին։ չգնահատուիլը թող մղէ ձեզի թէ՝ ի՞նչ մեծ բարիք ու օրհնութիւն է մարդիկներու ծառայելը, վարձք արտի թէ ո՛չ։ Ու դուք այսպիսով արդէն Աստուծոյ հետ հազորդակցութեան և պաշտօնի բարձրութեան մէջ պիտի գտնուիք, վարձքերուն է՛ն նշանակելին։

Թօթափեցէք եթէ խաւար ու մոլեսանդութիւն ձեզ շրջապատեր են։ Լուսաւորչի լոյս հաւատը ձեզի լազ-

տեր ըրէք, ջահեր ու փարոս։ Ծնորհալիի շոնչը պատրոյգ ունեցէք, և Նարեկացիին ոգին՝ ձէթ։ Եթէ դասակարգնիդ քակուած քրքրուած է, վերաշնելու աշխատեցէք, բարձրացուցէք ու բարձրութիւննիդ ժողովուրդին մէջ որոնեցէք, նոյնչափ ալ ձեր զարգացումին։ Կրթութիւն ու գիտութիւն վախճան ու վերջ չունին։ Ջանացէք ունելու, առանց ատոր զարգանալ չկայ, և առանց զարգացման պաշտօնի գիտակցութիւն ու բարձրութիւն յուսալը առանց արեւի կենսունակութեան սպասել է։ Մինչեւ գերեզմանին գուռը ումնիլ ու աշակերտիլ պէտք է. ու այդպէս ալ թելագրեցէք ժողովուրդին։ Սիրեցէ՛ք Դպրոցը որչափ եկեղեցին, երկուքը մէկմէկու շաղկապուած են։ Կրթութիւն ու գիտութիւն կրօնին թշնամի չեն երբե՛ք. չհասկցուած գիտութիւնը և կիսատ կրթութիւնն են որ աւելի վնասակար կը գտննան։

Ժատ անգամ խօսուած է թէ քահանաներ գպրոցի բարեկամը չեն դառնար, նոյնպէս ալ՝ զարգացումի. ուստի ջանացէք այս կազմուած գաղափարը փոխել, ամէն ատեն գպրոցի ու գպրոցականի վրայ գուրդուրալ։ Աշխատեցէք զոհողութիւններով ունենալ պէտք եղած գրքերը, թերթերն ու պարքերականները։ Ասոնց օգուտները բազմապիսի են։ հապա՞ ազդեցութիւն ու ապաւորութիւննի՞ը. . . . Այսպէսով պաշտօնի սրբութիւնը, նուիրականութեան վեհութիւնը, ծառայութեան խոնարհութիւնը, աշակերտութեան հութիւնը, առաքելութեան անձնուիրութիւնը, գատաւորութեան անկաշառութիւնը, պաշտօնէութեան կիրառութիւնը պիտի ումնիք և կրկին վերստանաք, և անգամ մըն ալ սոյց տաք՝ ոսկի և արծաթ զարերու Ա. Հարց գործունէու-

թիւնը, կամքը, կորովը, նկարագիրը, զգացումը, գաշղափարը, նպատակը, ուսումնասիրութիւնը, դպրութիւնը, քաջ հովուութիւնը, անշահասէր վարմունքը:
Ժումկալ ու ողջախոն կեանքը նոյնն են ձեր մէջը.
ու այդ ոգւով ցաւատանջ վշտաչարչար հօտին մէջ քաշեցէք ու հովուեցէք այդ ցուպով, եղանակեցէք այդ սրինգով ու քարոզեցէք լոյս՝ Ս. Աւետարանով. այն ատեն պիտի տեսնէք հրաշալի արդիւնքներ, բարի գործեր, ընկերային յառաջդիմութիւններ, արժող, ցնցող, վերապրոլ ջանքեր. մեղադրանքները պիտի դարրին, բամբասանքներ, յերիւրանքներ գոյութիւն չպիտի ունենան, ուծացումներ, սառն անտարբերութիւններ, թեթևեամիտ վարքեր, անհաւասի երեւումներ իսպան պիտի անհետին. գառակարգներ բարձրացած, Հայ Եկեղեցին իր վեհութիւնը զգեցած, վաւեմութիւնը հազած, դուք ալ պիտի երեւիք վեհութիւններու ասաիճաններուն վրայ:

Այս՝ գիտենք թէ որչափ պարտաւորութիւններ, նոյնչափ մը և աւելի ալ գծուարութիւններ կան, ու ինչե՞ր չեն խօսուիր, ու որչափ քարեր է որ կը նետուին կղերի հասցէին, անշուշտ մեր իսկ ժողովրդին կողմանէ, որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ անհաւական նկարագրի, զգացումի, համոզումի, ըսենք նաեւ վարժանքի ու մէծ մասով թերի կրթութեան և չիւրացուցուած գաստիարակութեան հետեւանք, մանաւանդ երբ յանիրաւի կ'արձկուին այդ խօսքերն ու քարեր: Զանազան այդ համոզումներու, այլազան այդ մտածումներու շարքին մէջ կրկին կղերին կը մնայ ինչ որ պարտքն է ընել և ո՛չ թէ ցաւիլ, արտմիլ ու հակառակը գործել. անոնք համոզման առաջնորդելու է, ձուլման բերելու

է, ուր կենդանի հաւատքը կը պակսի, ու այդ հաւատքին և պարտաւորութեան կաղապարելու է և գործերով:

Կան որ աչառութիւնը կը սիրեն, կեղծաւորութենէ կը գգուուին և հաճոյք կը զգան շողոքորթութենէ, ու հակառակէն մեծ ցաւ ու վիշտ կը զգան երբ իրենց մէկ թերութիւնը երեւան բերելու սխալը կամ յանգնութիւնը կը գործուի: Եկեղեցիի պաշտօնեան, այս՝ գերի է մինակ իր պաշտօնին ու այն սրբութեանը, և ոչ թէ քմահաճոյքներու ու եւերու:

Մեծասունն ու տնանկը, աղան ու ծառան, խաթունն ու սպասուհին, ծերն ու երիտասարդը, տղան ու աղջիկը հաւատարապէս Եկեղեցիին զաւակներն են, և ձեզի՝ հովիւներուգ հօտը, ժողովուրդը. կը բաւէ որ անոնք ըլլան հաւատացեալ, բարեկաշտ, երկիւղած ու հնազանդ, և գուք ամէնուն հանդէպ միեւնոյն սպասարկութիւնը, միեւնոյն հոգածութիւնը ունենաք: Ազքատները խնամեցէք, հարուսաը քաջալերեցէք գէսի բարեկործութիւն, սպաւորները միմիթարեցէք, մարմնով ու հոգիսվ հիւանդները, տիկարները, ախտաթէսները, ինկածները, լքուածները, յուսահամները գարմանեցէք խօսքով, խրատով ու գործնականով, յուսազրեցէք յուսասու ջաներ լինելով:

Չեր ծուխեր կը գանգատին թէ քահանայ հայրեր մինակ Զատկի ու Ծնունդի մէջ կը փնտեն զիրենք. Եթէ ուղիղ են, հեռու կը գանուիք հովուելէ ու իրական հովիւրը. դուք պէտք է կանոնաւորապէս այցելէք ժողովուրդ ծուխերնուգ, մօտէն զիտաք ըլլաք անոնց նիւթական ու բարոյական վիճակին. Եթէ անոնց մէջ վէճ, կոխ, ոխ, քէն, անհաւատութիւն, ցաւ, հեծութիւն, բարոյական անկում ևայլն գանուին, ո՞վ պիտի

լոէ, ո՞վ պիտի տեսնէ, ո՞վ պիտի վիճակնուն և դարձանին վրայ մտածէ, եթէ ոչ դո՛ւք։ Դո՛ւք թէ ուրախութեան և թէ արտմութեան, թէ հիւանդութեան և թէ առողջութեան, թէ հարատութեան և թէ աղքատութեան անսնց օրերուն համնելու էք, զի հովիւ էք, հայր էք, սպասաւոր էք։ Մի՛, մի՛ ըսել տաք թէ մինակ մկրտող, պատկող ու թաղող քահանաներ են . . . :

Թաղական Խորհուրդներու, Ուսումն։ Հոգաբարձու, Տեսուչներու օդնեցէք, դիւրացուցէք անսնց աշխատութիւնները, և քաջալերեցէք ընկերութիւններ և միութիւնները . սա՛ ու նա՛ ձգձիմ ինդիրներու համար վէճի ու խօսքի մի՛ բոնուիք։ Դասաւուններու պաշտպանը, ու անսնց քաջալերանքին մասնակցողներ եղիք։ ուսունողները հրահանգեցէք, ուսուցէք, ձրի առէք և ձրի տուէք։ Կրթութեան հոգատար, գիտութեան սիրող եղիք։ Եթէ չունիք՝ պատրաստուեցէք բեմն խօսելու կենաց Բանէն, դպրոցէն, Եկեղեցական օրէնքէ, կարգուսարքէ, մարդկային, ընկերային, ազգային, կրօնային տեսակէտներէ . պարզ, հասկնալի, անսեթեւեթի խօսեցէք, ու միշտ պատրաստուած։ Պաշտպանեցէք հոտերնուգ իրաւունքը, իրաւանց և պատշաճից սահմաններուն տակ . մի՛ քաշուիք։ Նախանձախնդիր ոգւով ազգային գոյից, իրաւանց, ընչից ու պատուոյ համար ըրէք կարելին ու անկարելին ալ . այս է ձեր պաշտօն։

Հաւատարմութիւնով սպասեցէք ու սպասարկեցէք Ա. Մեղանին, ու անկէ ակնկալեցէք ձեր կերակուրը։ Եկեղեցի մաքրութեան խիսա հոգ տարէք, Աեղանի սրբութեան մեծ ջանք ունեցէք։ Ընդհանրապէս մեր Եկեղեցիները չեն պահուիր մաքրուր, սեղանները փոշիի մէջ, անոր սպասները ժանգուած ու աղտօս, կոտրած

փրթած, թափթված, զգեստներ կտրտած, պատուած ու խզուած, ջաներ փոշեթաթախ, ձէթկաներ ածխացած, աշտանակներ գունափոխած, անձեւ, տձեւ մոմկաներ, գանձարաններ շատ տեղ անապահով, անձաշակ ու խառնիխուռն զիզուած, փոշիի և մկնեբու ազատ ելեւմուտք, ամէն կողմ մամուկներ սատայնանկեր են, ծուխեր քուլա քուլա կախուեր են, գորգեր փճացեր են, գրքեր ցեցակեր ու մկնակեր են եղեր, ամէն ինչ անմաքուր, անձաշակ։ Հապա գաւիթներ ու խուցե՞ր, ուր սպաս կը գործուի . . . Խաչնանգիստի ամաններ են . . .

Ու այս բոլորին պատճառն ու պատասխանատուն մենք չե՞նք. ո՞վ պիտի խօսի, ո՞վ պիտի թելազրէ ստորադաս պաշտօնեաներուն, ու ո՞վ պիտի հսկէ և գործէ, եթէ ոչ դարձեալ կղերը։ Շշուկներ կան թէ նախնի կղերին պէս ծոմապահութիւն, պահեցողութիւն, ապաշխարանքի ընթերցում չկայ, նաեւ մարմնով մաքուր, ժուժկալ, կեանքով սրբակեաց քանինե՞ր են որ կը մերձենան Ս. Պատարագին. Ժամակարգական կարգեր, շրջանի կանոնաւորութիւններ չեն յարգուիր, ասոր համար ժողովուրդը կ'ուժանայ և կը պաղի իր Եկեղեցին։ Եթէ իրօք է այս, մեծ գատապարտութեան տակ ենք։ Պարտաւոր ենք, այո՛, նիւթական ու բարոյական բացարձակ մաքրութեան ու սրբութեան հոգ տանիլ ու տաճարներուն ալ նոյնչափ։ Ճաշակի, կանոնաւորութեան, կարգապահութեան, նոյնչափ ալ ձեր անձին, մարմնին ու զգեստներուն մաքրութեան հոգ տարէք, զի ժողովորդին հետ է հաղորդակցութիւննիդ։ Խոստովանանք, Հաղորդութիւն, հիւանդի կարգալիք, այցելութիւններ, այս ամէնը կը պահանջեն։

Պատուական եղբայրներ։ Եկեղեցին իր ներքին ու արտաքինով պատկառանք ազգելու է, և դուք՝ նմանապէս, ու զայն սիրցնելու էք։ Նախնի այն տաք վերաբերումը ձեզնից լինելու է։ այս ինքնակամ սպասաւորութեան ու ուխտաւորութեան մէջ ձեր սրտին զգացումներով և խղճի պարտքերով միացած ու վերացած՝ Տէրոջ այգին մէջ մեծ աշխատութիւն ու գործունէութիւն ցոյց տալու էք։

Շատ ստորևացուցիչ է նաեւ երբ քահանաներ ծուխի, դրամի համար կոփւներ կը յարուցանեն ու շատ անգամ ամենաչնչին գումարի մը համար իրար կ'անուանարկեն, նոյնինքն մոռնալով թէ իրենց շուրջը ժողովուրդ կայ կամ ուրիշ պաշտօնեաներ։ Սա՛ որչափ ծիծաղելի կը դարձնէ, ու յաշս այլոց մեծ նուաստութիւն մը չէ։ Մեծ զգուշութիւն ընելու էք սա երկու մեծ չարիքներէն՝ արծաթսիրութիւն ու արեցութիւն։ ասոնք շարունակ ման կ'աղաղակին ամէն անոնց, որոնք իրենց թակարդներուն մէջ ինկած են, մանաւանդ ժողովուրդ կառավարող առաջնորդներուն։ ըլլան սարկաւագ, քահանայ, վարդապետ են։

Արթո՛ւն կեցէք, չէք գիտեր թէ երբ կուգայ տան տէրը։ արթուն կեցէք և հսկեցէք, որպէս զի տուներներ (հօտերնուդ) գող չմտնէ։ զի ապա ամբողջովին կը փձանաք։

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պատուարժան Թաշական Խորչուրդներուն

Ազգային Սահմանադրութեան գծած օրէնքին համաձայն, անոնք որ ժողովրդեան քուէովը կ'ընարուին և կամ առժամէնայ Խորհուրդ կը կարգուին, անշուշտ մերտած ու սորված և գիտցած կը լինին թէ ի՞նչ են թաղական Խորհրդոյ մը պարտքերը և իրաւանց սահմանները։

Ա. — Իր բաղին կամ զիւղին ժողովրդեան ազգային գործերու մատակարարութիւնը։

Ամէն Խորհուրդ պէտք է որ լաւ կշռած լինի թէ Ազգ։ կալուածներու բարւոք մատակարարութիւնն ու անոնց պահպանումը մեծ և միակ միջոցն է հանրային գործերու լաւ ուղղութեանը և կառավարուելուն, և նոյնչափ ալ ժողովրդին անկեղծ համակրանքին՝ դէպի իրենց պաշտօնավարութիւն։ Յոսի մատակարարութեան երեսէն, թոյլ և անհոգ վարմունքներէ շատ իսկ առւժած ենք. կնճռուս դժուարութիւններու գուռ բացած են մեր հանրային հարստութիւնները՝ իրենց չափին ու աստիճանին մէջ, և տեղի տուած են բարերարներու իսկական գանգատին, և այդպիսիներուն նուազման պատճառ եղած են։ Ուրեմն աւագ պարտականութեան բաժիններ կը ծանրանան մեր Պատ. Խորհուրդներու ուսին, ու աւելին ալ իրենց հոգածութեան յանձնուածները կորուստէ, փլուզումէ, անգործածելի վիճակ մը ունե-

նալէ գերծ պահելու են, և աւելի շատցնել ջանալու են ու առ այդ ամէն ջանք թափելու են. վասն զի հաշկառակը պիտի բերէ իրենց վրայ խղճի և համրային գատաստանը, ու ապագան ալ միշտ այդ գատագծիուը պիտի հաստատէ: Օրինական գործողութիւններու թերիներուն եւս ուշադրութիւն դարձնելու է. անհոգութիւններ, կոյք վատահութիւններ և ծգձգումներ շատ մը վնասներու և անտեղութիւններու դրաներ կը բանան, և արդէն շատ ալ բացած են. ասոնք յոյժ կարեւոր և մտածելի էշեր են և անմիջական գործադրելի պահանջք մը. ասոնց վրայ մասնաւոր և յատուկ ուշադրութիւն դարձնելը պարտաւորիչ է և նոյնքան ստիպողական:

Բ.— Եկեղեցիի Հոգաբարձուրիւնը:

Ամեն Թաղ. Խորհուրդ պիտի գիտնայ թէ ժողովուրդին քուէն է որ զինքը այդ մեծ պաշտօնին, այսինքն Եկեղեցիի Հոգաբարձութեան կանչած է. չէնք մը որ նուիրական է և նոյնքան սրբազն. հապա պաշտօնեաներ որչա՞փ արդարացնելու են իրենց մաքուր կենցաղովը, նախանձափակիր ոգուովը, և սրտեւսնդ խանդովն ու բոլորանուէր անձնուիրումովը: Այո՛, Եկեղեցին ժողովրդին սիրան է, հոգիին մարմնացումը. իր զգացումը, խիղճը, սիրան ու կեանքը անոր հետ նոյնացուցած է. ուրեմն քանի՞ աչալուրջ հակողութիւն, և որչա՞փ խոհեմ հոգաբարձութիւն պէտք է, զի թերի, սիսալ անտարբերութիւն, անհոգութիւն ու անպատկառութիւն մը և թոյլ վերաբերում և վարելակերպ ուղղակի ժողովուրդին մաքուր զգացմանը, խղճին ու ջղմն պիտի աղդեն: Անոր լաւ հոգածութեանը, մաքրութեան, պայծառութեան, նորոգութեան, օրէնքին, կանոնապահութեան, սովորութեան ու աւանդապահութեան հոգա-

ծու ըլլալու է, բառին ուղիղ և լայն առումովը. հապա ինչչափ անոր պաշտօնեաներու ընտրութեան, մանաւանդ անոնց վրայ ըլլալիք հակողութիւններուն ուշադիր, ատոնց կարգադրութեան մէջ անձնական հաշիւ, ակնկալզւթիւններ, խարիր համար լուռթիւն, թաքուն նպատակներ մտնելու չեն: Երաժշտութեան, պայծառութեան, պատշաճ և վայելուչ զարդարանքին, կարգ կանոնին և ի՞նչ աշխատութիւն որ զայն անգամ մը եւս կը սրբացնեն, կը շքաւորեն, մեծ նախանձաւինդրութիւն և կորովի ընթացք կը պահանջնեն: Եկեղեցիի շարժուն գոյքերու համար մասնաւոր հոգածութիւն պէտք է. սրբազն անօթներու, զգեսաններու ու ամեններ համար ցուցակագրութիւն պէտք է քանակովն ու որակով. ամոնք գարակներու, պահարաններու, նոյն իսկ դրամարկղներու մէջ պահել պէտք է, մանաւանդ արժեքաւոր անօթներ, հին, արժող կատրներ, անփոխարինելի գեղարուեստական առարկաներ ու ինչքան թանկագին հին ձեռագիր մագաղաթէ մատեաններ ըլլան, եթէ ձեռագիր թղթէ ու տաղագրեալ, այնպէս և գեղանկար պատկերներ հին թէ նոր, խապա կորուսէ և վճանապէ գերծ պահելու է. այո՛ ասոնց մեծ յարգ և կարեւորութիւն տալու է. ցաւալի է որ շատեր փացած են, կորսուած են և ոյխնչի փոխարէն ծախուած: Այսպիսի պատուական հնութիւններ մեզի համար եւս առաւել արժէք ու թանկագին հարստութիւններ են, նիւթական ու բարոյական տեսակէտով: Երանի թէ այսուհեակւ գիտնայինք, ու մասնաւանդ պահել գիտնայինք: Այս կը պահանջնուի օրէնքի հապատկ, զայնս սիրող, ուսնող ու գործադրող ամէնքի Պատ. Թաղ. Խորհուրդներէն, որմնք և միշտ պիտի վայելեն ժողովրդեան վայելուչ յարգան-

քը , և վարձատրութիւնը՝ պիտի լինի զիսոակցօրէն աշխատելնին և պարտավճար ըլլալնին :

Դ.— Վարժարաններու Հոգաբարձութիւնը:

Թաղային Խորհուրդները նոյնչափ պարտաւոր պիտի լինին գպրոցական գործին , և իրենց աշխատութիւնը , լուրջ շրջանայից , խնամուտ առանց այլ և այլի ըլլալուն . երբեք խնայելու չեն ջանք ու դրամ և բոլոր պիտանի առարկաներ : Խորհուրդներ ուղղակի պատասխանատու են , մանաւանդ երե ժողովարդի մը պատագային և ամբողջ տուններու հիմնաւորութիւնն է որ ուղղակի իրենց յանձնուած են : Թաղ . Խորհուրդները , որովհետեւ շատ ժամանակներ հոգաբարձու , խնամակալութիւն կամ տեսչութիւն կ'ընտրեն , որնք ուղղակի վարժարաններուն հողը կը տանձնեն , հոգաբարձուներու բաժնին մէջ եւս պիտի խօսիմ , հետեւարար հոն այն բաժնին մէջ կարդալու է պարտականութիւններու գծումը :

Ե.— Աղբատներու խնամակալութիւն :

Բնութեան անյեղի օրէնքն է որ այսօրուան հարուստը վազը աղքատ լինի , ուժեղը՝ ակար , առողջը՝ հիւանդ , ծնող ունեցողը՝ անհայր անմայր , զաւակի տէրեք՝ անորդի և անոք . ահա այսպիսիններու հոգն ալ նախատեսուած ու յանձնուած է կրկին թաղ . Խորհուրդներուն . պարտականութեան հետ մարդասիրութիւնը , մարդասիրութեան հետ կրօնասիրութիւնը ու աւելի աստուածային գաղափարը պէտք է նուիրագործէ , ու այն ասեն խնամուին անանկները , պաշտպանուին , ու օգնութիւն փութացուին : Եթէ ուղղակի աղքատները նայուելու համար Խորհուրդները պէտք է ուշադրութիւն զարգուած , Խորհուրդները պէտք է ուշադրութիւն դարձնեն , ու այդ բազդէ անժառանգներուն նա-

յին օրը օրին : Կ'արժէ միշտ յիշել Փրկչին ոսա խօսքերը . «Որովհետեւ աղքատներուն չըրիք , ինծի չըրիք» . ու Սատուածային այն չեշտակի խօսքերը . «Ես եմ այրիին ու որբին պաշտպանը» : Արգ , կը միայ աղքատները կերպերել , մերկերը հագուեցնել , բանտարկեալները հոգալ ու միփիթարել , հիւանդներուն գեղ ու դարման տանիլ , խնկածներու , լքուածներու համնիլ , այրիներու պաշտպան ըլլալ , անոնց իրաւունքներուն տէր ու տիրականութիւն ընել , որբերը հոգալ՝ իրբեւ զաւկի , անոք ծերեր , կարօտ պառաներ ու խեղանգամներ պատսպարել , չքաւոր գպրոցականներու բարեկարներ , պաշտպաններ գտնել , գպրոցական պիտոյքնին անպատճառ հոգալ : Զանազնութիւն , խարի պէտք չէ գնել տեղացիի ու գրսեցի . ցաւալիօրէն շատ անգամներ տրաւունջներ կ'ըլլուին զըրսեցի աղքատներուն գէմ . աղքատը աղքատ է , ըլլայ զըրսեցի ըլլայ ներսեցի : Անոնք որ խնամակալութեան պէտք ունին՝ մի՛ զլանաք , բարի խորհուրդներու ու խրաններու երբ կը կարօտին՝ մի՛ անտարբեր գտնուիք . ասոնք նուիրական պարտքերնիդ են ըստ օրինի և ըստ Աւետարանի . զաւաթ մը պաղ ջուրն խսկ չպիտի կորսուի : Միշտ աջակցեցէք Աղքատափնամներու և քաշալերեցէք . բաղդագուրկ եղբայրներ ու քոյրերը մի՛ թոյլ տաք որ շարունակ արտասուեն և ծնունդնին անիծեն . մի՛ թոյլ տաք որ որբերը անխնամ և ստահակ մեծնան . անոնց ապագայի գատապարութիւնները ուղղակի ձեր վրայ պիտի ծանրանան . մի՛ թոյլ տաք որ մատաղ այրիներ ու որբեր (հասակաւոր) ուղիղ ճամբէն չեղին , և կտոր մը հացի , պուտ մը ջուրի համար պատիւնին վաճառեն կամ կրօնափլս ըլլան . պատասխանատուութեան ծանրութիւնը խիստ շատ պիտի կը ու :

Հակեցէք Աղքատախնամի գանձանակներուն, յանուն աղքատներու եղած կտակներուն ու նուիրատուութիւններուն պահուած ու աւելցուած դրամներուն ու գոյքերուն պահպանուամին հոգածու եղիք. այրիի և որբի իրաւունքներու, ժառանգութիւններու տէր կանգնեցէք, որ շատ անդամներ այսպէս թէ այնպէս կը կորսուին, և կամ աս ու ան տեղին, գործին կամ ծախսին կը յատկացուին, իբրեւ թէ վերջը աելլը պիտի զրուին, ու այսպէսով կը փամանան:

Ե.—Թաղալին Խորհուրդներուն պարտաւորութիւնն է, հաեւ իրաւունքը՝

Եկեղեցիի գանձանակներու, պնակներու, մնաուկի, ու բանկալի և այլ օրէնքի կարգ անցած իրաւունքները, կտակները, նուիրատուութիւնները մատակարարել խիստ ու աչալուրջ հակողութիւնով. մանրակրկիտ հաշուեպահնջութիւն ու հաշուետուութիւն պէտք է, մանրամասն բացատրութիւններով ելեւմուտքի էջերուն. մաքուր և օրինաւոր հաշիւները՝ կարգ մը խօսքերու, վէճերու ու տարակոյններու տեղի չեն թողուր, ու ժողովուրդն ալ այսպէսով տեղեակ կը լինի հաշիւններուն և անոնց օրինաւորութիւններուն, և ահա այն ատեն ժողովուրդն ալ աւելի նուիրող, կտակող ու քաջակերող պիտի լինի:

Զ.—Թաղալին Խորհուրդներու օրինաւոր նիսերը:

Այո՛, պէտք է ունենաք և լսէք ժողովուրդի գանգատի ձայները, իրենց վէճերուն, կոիւններուն հաշտարարը պէտք է լինիք. ընտանիկան անհամաձայնութիւններուն, ժառանգական ինպիրներուն պէտք է միջամուխ լինիք. անիրաւուածին, անկարողին, իրաւագուրքին դակութիւնները պատասխանաւութիւններուն վրայ: Անկանոնութիւն, անհաշիւ լնթացք, անպատասխանաւութիւններուն վիճակ միշտ մնացնութիւններ կը ծնին, ու հաշիւնները միշտ վեսաով փակուած են. զինուորական, ժառանգական ինպիրներ ու կնառուութիւններ միշտ վեսաակար եղած են, և գիւղի թէ թաղի վարկարեկումին պատճառ: Ուստի պէտք է ուշաղիր ըլլալ ու արդիւնաւորել վստահուած գործը, ու բարձրացնել պաշտօնի հանգամանքը և վեհութիւնը:

առանց ու և է ակնկալութիւնն, միշտ արգարութիւնն ու խաղաղաթիւնը նշանաբան ունենալով՝ ըստ այնմ որոշում պէտք է տաք ու գործադրէք. ահա՛ ձեր որոշ պարագերը առ ժողովուրդն, որ իր քուէններով ձեզ պատուեր, ու ազգ վերին իշխանութիւնն ալ հաստատեր է:

Ե.—Խորհուրդները պարտաւոր են գիւղին կամ թաղին մէջ եղած ծնունդները օրը օրին թուականովը, մականուն, հօր, մօր անուն, ծնեալի, մկանող քահանայի, եկեղեցիի և այլն՝ գրել շատ կանոնաւոր, նոյնպէս մեռեալներ և պատկներ, մինչեւ իսկ տեղէ տեղ փոխադրուողներ, եկող գացող գաղթականներ ու գաղթողներ: Ունենալու են հաեւ կանոնաւոր արձանագրութիւն՝ սատրագրուած Խորհուրդի գիւանէն, և սեւագրութիւն ամբողջ ներկաներէն, գօրիի տեար, պարտաւորիչ է հաեւ կոփունենալ՝ մէկ երկու անդամներու կոփքին տակ պահուած: Ազգ կալուածներու բափուներ, հեօններ, մուրհակներ, զօշաններ և ուրիշ կարեւոր թղթեր լաւ ու խնամով պահուելու են: Կայս. Ֆերմաններ, արտօնագրեր, կտակաթղթեր ու ամենը. ասոնց կարուսար թէ՛ վեսա և թէ պատասխանաւութիւն կը հարակրեն Խորհուրդներուն վրայ: Անկանոնութիւն, անհաշիւ լնթացք, անպատասխանաւութիւններուն վիճակ միշտ մնացնութիւններ կը ծնին, ու հաշիւնները միշտ վեսաով փակուած են. զինուորական, ժառանգական ինպիրներ ու կնառուութիւններ միշտ վեսաակար եղած են, և գիւղի թէ թաղի վարկարեկումին պատճառ: Ուստի պէտք է ուշաղիր ըլլալ ու արդիւնաւորել վստահուած գործը, ու բարձրացնել պաշտօնի հանգամանքը և վեհութիւնը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դրութի Հոգաբարքոյ, Խնամակալ եւ Տեսուհերու

Ինչպէս դուք, նմանապէս ամէն ոք գրեթէ զգացած, հասկցած ու զիտցած է թէ ցեղի մէ, ժողովութղուներու և բոլոր ազգերու փրկութիւնը՝ զայն անկրթութենէ, ագիտութիւնէ, և ջնջող, մեռյնող ամէն պատճառներէ զերծ պահող մտաւոր զարգացումը եղած է միայն, որուն հետ զուգբնթաց զնալու է և կամ անկէ ալ կախում ունի սրաի բարեկրթութիւնը. առողջ ֆիզիգականն ալ ձայն ունի. ու ասոնք կ'ակնկալենք միայն զբոցներէ: Զարգացած ազգերու վիճակը արդիւնքն է ասոր և բացրոշապէս:

Դպրոցը մեծ օժանդակն է մարդկային կատարելութեան, և լծակը՝ ընտանիքներու բարձրացման: Եէնք մըն է ուր պիտի կազմուեն նկարագիրներ, պիտի կաղապարուխն սրտեր, պիտի ծուլուխն մարդեր, երբ մըտնեն այդ մեծ գործարանը: Միշտ ըստուծ ու ցեղեղուած է թէ՝ դպրոցը լոյսի վառարանն է, մտքի տաճարն է, ուր զիտութիւնը իբրեւ արեւ կը ծաթի ու իբրեւ Աստուած կը հովանաւորէ. անոր սեղանները կը թութեան ճաճմանչներով կը ցոլցլան, ու զարգարող առարկաներն են զիտական, գեղարուեստական, բարոյագիտական և ուսողական դասերը:

Հո՞ն ինկարուները, սպասարկողները և պաշտաման ծառայուները զաստու, զաստիարակներն են: Ա-

նոնց վերին հսկողները, մասակարարողները դուք չուգաբարձուներդ էք կամ իննամող Տեսուչներդ: Կը սպասենք որ վերին հսկողներդ ձեր անձնուէր պաշտօնին զիտակցութիւնով լիովին արժանաւորներ լինիք, ու այդ արժանի աշխատութիւններու մէջ զոհողութիւն դնէք, հսկողութիւններու ատեն անձնգիր գտնուիք:

Գիտէք որ դպրոցը մեծ տունը կամ ընտանիքն է, ուսկից ամբողջ թաղի մը, գիւղի մը, քաղաքի մը ժողովուրդը վերաբին կը ծնիք. մարդկային, ընկերային, հանրային հիմնաւոր ու բեղմանաւոր կազմակերպութիւնները, կամ անհատական այդ ուժերը որ ամբողջինը թէ բեղմանաւորող ուժերը, ընդհանրապէս ծնողները առանձինն առանձինն չպիտի կրնային տալ, ու մինակ մեծ ընտանիքը պիտի կրնայ ծնիլ, անեցնել ու բեղմանաւորել: Ասոնք կը կարօտին ընդզմիշա ինսամոս ու գուրզուրոտ, երկար ու անսպառ համբերութեան, մեծ ոգեւորութեան, բարի կամեցողութեան, առնական կորսի և մաքուր կամքի: Այսպիսի մեծ ընտանիքի մը վարիչները քանի՛ խոհական և ո՛քան իմացական վարմունք ու վարելակերպ ունենալու են, մեծ տանը մեծ գործը չվտանգեւու, չզանգաղեցնելու համար, որը պիտի լինի ապագայ անհամար սուներու քանդումին և բաղմաթիւ անհաներու այլամերումին պատճառ:

Հոգաբարձու Տեսրք ուշադրութիւնէ երեւք վրիպեցնելու չեն ինչպէս նիւթականին մասակարարութիւնը որ իիդն է, անանկ ալ բարոյականին ջամբումը որ ամբողջ սիրան ու հոգին է: Ընսեւլացնելու ու պարտաւորցնելու էք ծնողները, որ սիրայօժար վճարին տղաներու թոշակը, այն հասկացողութիւնով թէ

փախուսա տալը , ժլատ գտնուիլը մեծ ուիրն է ծնող-ներու կողմէ գործուած առ զաւակունս : Գտնել ու քա-ջալերել պէտք է անզաւակները , կարողութեան տէրե-րը , որպէս զի անոնք ալ պարտք սեպեն աղքատիկ և որր տղաներու բարերարելը , վասն զի անոնց կրթու-թիւնը՝ իրենց հանգստութիւնը ու շահն են , և ընդհա-կուակն անկրթութիւն ու մազիատութիւնն են իրենց թշուառութիւնը : Զանալու էք նորանոր հասոյթներ գտնալու , և գպրոցը միշտ սիրելի ընծայելու . նոյնքան աչալուրչ գտնուելու էք գասասուներու ու վարժուհի-ներու ընտրութեան , ծրագրի , կանոնագրի ընտրութեան , պատրաստութեան ու պարտաւորութեան գործերուն մէջ : Միշտ խորհրդակցելու էք Ուսումն . Խորհրդի ու թա-ղային Խորհրդագուներու հետ , կարեւոր գործերու մասին , մանաւանդ պաշտօնէի պէտքին առջեւ : Զէ թէ մարդուն համար գործ , այլ գործին մարդը գտնելու էք : Ակնկա-լութիւն , աղգական , բարեկամութիւն ևայլն մուտ գոր-ծելու չեն սոյն տեսակ կենսական հարցերու ատեն :

Չեր ձեռքերուն յանձնուած գպրոցները երբ լաւ ուղղութեան մը մէջ գտնուին , բարձր մակարդակով եւ-րեւին , շատեր աւելի պարտավճար պիտի գտնուին : Երբ այս փափուկ պաշտօնը ձեզ վստահուած է , յանուն մարդկութեան , յանուն ազգասիրութեան և յանուն հա-զարտւոր Հայ ընտանիքներու բարւոքմանը և յառա-ջացմանը , պէտք է անայլայլ աշխատողներ լինիք ամեն գնով : Մի մունաք թէ նոյնչափ և առաւել ջանադիր լինելու էք տաճարներու հանգէպ ևս ունենալ սոյն խո-րունիկ պարտաւորութիւնը , ու պարտաւորցնել ամենը՝ որ ձեր հոգածութեանը յանձնուած են : Առանց եկեղեցիք գպրոցը առանց խողի լապտերին պիտի նմանէր :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՀՆԵՐՈՒ,

ՆԱԵՒ ԴՊՐՈՎԱԿԱՆՆԵՐՈՒ



Ուսուցիչ և ուսուցչունիներ:

Դուք կանչուած էք մտաղաշ մտքերու մշակումին , նկարագրերու հաստատումին և ազնուացումին , նորա-ծիլ սրաերու բարեկրթումին , զգացումներու սրումին , գաղափարներու հարստացումին , թարմ կեանքերու թե-քումին ու սրբացումին : Այս աղուոր մշակութիւններուն գուք մտանագէտներն էք :

Այո՛ , ձեր պաշտօնը սուրբ է , արուեստնիդ բարձր ու ամենանուրբ , և գեղարուեստական մնօթներէն ու արժէքներէն աւելի փափուկ ու արժէքաւոր : Որչափ փափկութիւնով , նոյնչափ նմուռթիւնով , որչափ գըր-գանքով նոյնչափ ուլ կորովով պէտք է աշխատիք . զի ձեր առջեւ ընդարձակ դաշտ մը ունիք և անհամար գաշարդիներ : Ուրեմն լաւ ու փորձ արուեստով ձեր պաշտօն ու պարտականութիւնը պիտի լինի համաձայն ու համերաշխ մշակում մը (գաստիարակութիւն) ի գործ գնել՝ պատրաստ գեանի ընդունուած գործաւորներուն վրայ : Չեր ջանքը պիտի լինի անխնայ տքնիլ կաղա-պարելու թերիսաշ մտքերը կրթութեան ու գաստիարա-կութեան ձուլարանին մէջ . ու այդ կաղապարումովը պիտի պատրաստէք նախ իրենց մէջը անօթը (անհատը) , որյնը (նկարագիրը) , գեղարուեստը (կիրթ մշակուածը) ,

արժէքը (զիստունը) և ի մի բան ապագայ մարդկութիւնը, բարոյական բարձր կեանքը, ուր իւրաքանչիւրը՝ խորհուրդներու, մտածումներու և հեռաւոր օրերու անլոյց հարցերու մէջ պաշտօն ու գեր պիտի ունենան, գերեր ու գործեր, որոնք արդիւնաւոր ու բեղմնաւոր պիտի լինին իրենց ու ընտանիքներու, ցեղին ու համայն մարդկութեան :

Դուք էք որ իրը այգեպան պիտի բահէք, բրէք ու յօտէք այդ մտքի որթատունկերը, անշուշտ աւելորդ, գոսացած, չորյած ձիւղերը մինչեւ արմատ գուերը պիտի չնջէք, որպէս զի անոնց տեղը նորը, թարմը, հիւթեղը աձին, արձակեն ոստեր՝ ոսկեհատ ողկոյցներով լի : Այս՛, դու : Էք որ իրը երկրագործ՝ մտքի այդ արտերն ու անգերը պիտի վարէք, ներկէք և խոպան հող գուղձերը փշրէք, սէղարմատները հանէք, ու նետէք սերմատնահատեր, հնամքաղին ատեն ոսկերանգ հասկերն և որաները քաղելու համար :

Դուք իրը հոգեխօս պէտք է իջնէք անոնց անրիծ հոգիներաւ խորքը, լաւ ուստամասիրէք իւրաքանչիւրի կազմութիւնը, ու ըստ այնմ կարենաք խօսիլ հոն, ցանելով մաքուրին, սուրբին, կատարեալին հունտերը, որոնք կամաց կամաց աճին ծլին ու պաղաւորին : Այսպէսով պիտի պատրաստէք պայքարի մարզը, մտքի յագեցածը, սրտի անկեղծ ու անհենզը, և հոգիի վեհ վսեմը :

Դպրոցները այս ամենքին խանձարուրներն են, ու անոնց նշանատախտակը՝ յառաջդիմութիւն բառը կը ցուցադրէ : Դուք պիտի ջանաք իրերեւ դայեակ ու սալսաւոր, խնկարկող ու օրհնող, և որ աւելին՝ իրը ծնող : Պիտէք գայեախները՝ նորածինները կը խանձարուրեն . դուք ուսման և կրթութեան կտորներով պիտի խան-

ձարուրէք, մտքի գործիներուն պիտի ծառայէք և այն ամենավ որ կը մնուցանուեին, կը պահպանուեին փոքրերը, խնկարկէք ու պիտի օրհնէք գիտութեան ու իմաստութեան ծուխովը : Հաւպա իբրեւ ծնող որչա՛փ ծանր պաշտօն ունիք ձեր զաւակներուն հանգէպ, որոնց թիւը շատ է ու անոնք նօթի ու ծարաւի են մտքի, սրտի, հոգիի ստամոքսներով . անոնք որ անգիտակ ու անմեղունակ իրենց հետ ունին խառն ու անկազմ բնաւորութիւններ, արիւնի, սրտի, մտքի, նկարագրի և նախնական վարժութեան ազգի ազգի զանազանութիւններ : Ասոնք ի մի վարժեցնելու, կրթելու, դաստիարակելու համար որչափ ծնողական հոգածութիւն ու համբերութիւն, նոյնքան ալ դաստիարակի խոհեմ խոհականութիւն, լրջութիւն ու կարողութիւն կը պահանջուի, որով կարող լինիք լաւ տիրացած ըլլալ մանուկներու ամբողջ կազմութիւններու խմբումին, ու այդ զանազանութիւններէն ծնցնէք մտքուր, կորովի անհատականութիւնը՝ համերաշխ ներգաշնակաւորումով, որոնցմով պիտի շնուրի ու կազմուի ժողովրդեան մը փառաւոր ապագան :

Միեւնոյն ատեն շատ զգոյշ պիտի ըլլաք վարքով, բարքով, խօսուածքով, կեցուածքով, զի մէկ օրինակը հատզար խրատով չէ կարելի սրբագրուիլ : Այս՛, զգոյշ, որպէս զի տղաներու մտքին անմարս ու հումեփ դասեր, շատ մը ձանձրացուցիչ ուրիւններ չհրամցնէք նորութեան և կամ սա՛ ու նա՛ փայլուն բառերու ու երեւոյթներու ձեւերու տակ : Զգոյշ՝ իրենց ըմբռնումներէն վեր՝ վերացական ու վեասակար զաղափարներ ներշնչելէ, մանաւանդ նմանը նմանին գէմ ցուրտ, սառն ու բիրտ վերաբերումներ ունենալէ : Այս տեսակ անօգտակար դա-

սաւանդութիւններ միանգամ ընդ միշտ կը փճացնեն աղանձներու էութիւնն ամբողջ, և ախտուր հետեւանքներ միշտ կը վարկարեկեն երկուքն ալ:

Պինդ ուսուցէք նաև ազօթքի ուսումը, տաճարի հանգէպ պատկառանքը, որ պիտի առաջնորդէ զիրենք երախտագիտութեան՝ ամնն անոնց հանդէպ որ զիրենք հովանանաւորդը է ու կը մնուցանէ մշտանունդ կենդանութեան ու կեանքին. պատրաստեցէք անոնք առողջ, չարքաշ, անձուուէր, ազգասէր ու հաւատաւոր ապագայ Հայ ժողովուրդը. ոչ թէ ֆիզիքապէս ապառողջներ, թոյլ, մեղկ, հեղդ, աննկարագիր, զգացումէ զուրկ, իմաստակ, յաւակնուա ու գուազներ: Ասանիները՝ մարդկութեան բեռ, յառաջգիմութեան թշնամի, ցեղին ցեց, ընաանիներու ուսիծ, և նմանիներուն՝ անպատուութիւնն են:

Զեռքերնիդ ունիք լաւ մուրձեր, նուրբ գործիներ. բայց պէտք է միշտ այդ գործիքները սրէք, փայլուն ու յդկուն պահէք ձեր աշխատասկրութիւնով. ունենաք դրադարաններ, ուսումնասիրէք, ուսանիք ամեն օրուան համար, որով ձեր հասու գործիներով՝ լաւ անհատը, անձուուէր ընկերը, տիպար մարզը, աղնիւ սիրու, վեհ հոգին, զոհաբեր կեանքը, ամբարուն միտքը կոփէք, կոէք, ու քանդակէք գեղարուեսմներու նուրբ հրաշալիքները, և դրուագները անմեռ, թանկ պատկերները անեղծ ու տիրական: Այս է ձեր սուրբ պարտականութիւնը: Ծնդհակառակն զատապարտութիւնը՝ խոզներնէդ, հանրութենէն ու ապագայէն միշտ պիտի տեղան վրանիդ:

Դուք, մանուկներ, պատանիներ ու երիտասարդներ. երկորրդ վարժոցին (զպրոց) մէջ ընակիչներդ մանկական անմեղ օրերէն մինչեւ երիտասարդի հասակնուդ,

հասկացութիւններու այդ առաջին շրջանին սորվեցէք մեծ ընտանիքի մեծ տանը բոլոր օրէնքներն ու կանոնները, որոնք միշտ հասկանալի ու դիւրմբունելի են. անոր ուղղութեան, նպատակին, մեծ խոէպին և հիանալի արգիւնքին գիտակ դարձէք, զի անոր օրէնքները ունենալ, կանոնները սիրել ու պահելը ձեր մէջ անհատ մարդը ստեղծել, նկարագիրը կերտել, միտքը բեղմնաւորել, սիրաը ազնուացնել է: Անոր ուղղութեան հետեւիլ, անոր նպատակին հմտանալ՝ հմտանալ ու ձանչնալ է աշխարհը լրիւ, կամ այնչափ մը զիտակ դասնալ իրերու ու իրողութիւններու, ընկերացին ու ժողովրդային բարդ ի բարդ հանգամանքներուն, որոնք անխուսափելիքն կեանքի ուղիին մէջ պիտի ցցույն ձեր առջեւ: Խոէպի զիտակ դառնալ և զայս խւրացնել որոշ ուղղութիւններով և մարդկացին ճանաչողութիւններով, մեծ ջանքեր, համբերատար աշխատութիւններ, երկար տարիներու, և անընդհատ պարապմունքներու ամբարութիւններ՝ ապագայի բոլոր գժուարութիւններու հանցուցաւոր կնճռսառութիւններու լուծմանը պիտի ծառային:

Սիրով ու ինսամով ընդունեցէք ու շարունակեցէք այն ամենը որ ներկան ուրախալից կը գծեն, ապագան յուսուլից կը պատկերեն: Ուսուցիչ ու ուհիներ հեղինակութիւններ են, իրենց ասախճանին ու կարողութեանց մէջ: Հեղինակութիւններու առջեւ հնազանդ ու հպատակ ու սիրով պատկառիլ և օրինակելը ամբողջ ունենալ է անոնցմէ այն, ինչ որ ձեր մէջը պիտի ձեւակերպէ բոլոր հեղինակութիւնները:

Հստ այսմ պարտաւորցնելու էք որ անոնք սպառին մաշին ձեղի համար, որով կենդանանաք ու ապրիք: Աշ-


խատանքը միակ պայմանն է յաջողելու . լաւ գլացէ՛ք ուսանո՞ղ ու ուսանողութիւններ, ասպագան, հարսառութիւնը, հանգստութիւնը, բարձրացումը, յաջողութիւնը, փառքը, արժող կեանքը, գիտական ու ձեռական արուեստները, վաճառականութիւն, պատուաւոր կենակցութիւն, ախպար մարդ, ազնիւ կենցաղ, անտեսագչա, տանտիւկին, բարի մայր, խնամատար ձեռներ, ձեռներէց ողի, հերոս ու հերոսուհի ու ամեն ճոխութիւն՝ այդ ձեր յաճախած շէնքերուն մէջ դիզուած կան . մէթոտիկ ջանք, համբերատար տքնում պիտի կրնան ամենին տիրացնել :

Ձեր ուսանողական աարիքին մէջ ազատ չէ՛ք և եթէ ըլլալ ուզէք, կեանքերնուղ մինչեւ ծրարոցը գերի ու ասրուկ պիտի մնաք : Եթէ օրինազանց լինիք, մինչեւ գերեզման օրէնքները ձեզի պիտի մնշեն : Եթէ անհնազանդ գտնուիք, ուրիշներուն չպիտի կրնաք հրամայել : Եթէ ծոյլ մնաք, աղքատութիւնը տուներնուղ պիտի թագաւորէ : Եթէ աննկարագիք լինիք, մարդկութիւնը իր ծոցէն ձեզի պիտի վասրէ : Եթէ անհանձնանուէր ընկերացին, հանրային դատաստանը վերջնական վճիռ պիտի տայ . և եթէ՝ անհաւատ, անկրօն երկիրտութեամբ ապրիք ու վարուիք, ձեր ապրիլը ըսու մը, ասհնջանք մը և իրական մահը պիտի լինի : Զանացէք ձեր ծնող ուսուցիչ ու ուհիներուն և համայնքին յոյսեւը ի գերեւ չհանել : Ուխտեցէք այդ գրասեղաններուն վրայէն գուրս գալ օր մը՝ անձնուէր կատարեալ, տիպար ազգասէք, բարեկիրթ, հմուտ, մտքով մշակուած, սրաով բարեկրթուած, հոգիով՝ վեհաւորած մարդը, պիտանին ու կատարեալը : Ու այս կատարելութիւնը պիտի առաջնորդէ բարձրագունին, երբ Բանին ձշմարտութիւնն ալ ուսնիք . առանց այդ ուսման կատարեալ

զիտութիւններու չպիտի տիրանաք . ձեր գրադարանները գեղազարդեցէք Ս . Աւետարանով, մտքերնիդ՝ անոր ջամբումէն, ու կուրծերնիդ՝ անոր կենսունակութենէն :



Կ Ն Տ Ա Ն Ի Ւ Թ Պ Ա Ր Յ Ք



Սիրելի ժողովուրդ . զուք կազմած էք ընտանիքներ, հիմներ էք առուներ, ու այդ տուներէն ու ընտանիքներէն ժողովուրդ ու ազգն ողջոյն, այո՛, կազմած էք պսակաւոր լծակցութիւնով ու այն օրհնութիւնով թէ «Աձեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք գմա» , այն լծակցութիւնով, զոր սուրբ Պատիկի խորհուրդը նուիրագործած է . «Յաղագս որոյ պատաւական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք նոցա . զու Տէր որ սուրբ ես և ի սուրբս հանգուցեալ, սուրբ պահեա զանկողինս ամուսնութեան սոցա, և միաւորեա զսոսա զուգակցութեամբ ընդ լծով վիճակի քո, որպէս զի մի՛ յայսմ հետէ կոչեսցին երկու, այլ մի մարմին, միաւորեալ հոգւով հեղութեան, սիրել զմիմեանս պարկշա վարուք, անրիծ հոգւով, առանց ամօթոյ, առանց լկութեան պատրաստ լինել ի գործս բարիս . . . : Տնկեա զսոսա որպէս ձիթենի պտղալից ի Տան Աստուծոյ, որպէս զի կեցեալք արդարութեամբ, սրբութեամբ և աստուածպաշտութեամբ ըստ հաճոյից կամաց քոց բարեսի-

րաց, տեսացն զորդիս որդւոց իւրեամց և եղիցին քեզ
ժողովուրդ և փառաբանիչ անուանդ քում պրոյ»:

Ժողովուրդ: Տե՛ս և լսի՛ր ինչպէս շատ տեսած ու
լսած ես, այս պատուական Խորհրդոյ անդին և լուսգին
գրուածք. տես քանի սուրբ ըրեր է ընտանիք կազմու-
լու պատճառն ու միջոց. ու լսի՛ր, քանի պատուական
հոչակեր է լծակցութիւնը, որոնցմով ընտանիքներ որ-
պէս պաղալի ձիթենիներ Աստուծոյ տան մէջ պիտի
մինին:

Ի՞նչ է ընտանիքը, եթէ ո՛չ իջեւանը լծակցողնե-
րուն, որոնք պիտի սերնդագործեն ընտանիքներու թիւը
շատցնելու. թիւ մը՝ որ անրիծ, մաքուր, աղնիւ, հա-
ւատաւոր ու կատարեալ անհատներէ կազմէ ամբողջու-
թիւն մը: Ո՞վ է ընտանիքի բունը. հայրն ու մայրը,
որոնք կը կազմեն ընտանիքը և կը վարեն ու պիտի
վարեն ատւնն ու բնակչութիւնը, ու պիտի հասցնեն
զաւակներ, որոնք իրենց անունն ու արիւնը պիտի
կըն:

Ծնողներ նման են պարտիզանին. պէտք է որ
լաւ մշակներ լինին, բահող, բրող, յօսող, քանցող,
ջրող ու սոսող, ցանող ու պատուաստող: Այս ատենն
է որ առւն-պարտէղը ծաղկալի և պաղալի պիտի լինի:
Անոր ծաղկիները գունեղ ու բուրող, ծառերը գեղու-
ղէշ ու թարմոստ, անոր պատուղները լիառատ, համեղ
ու հիւթեղ. և այն ատեն է որ ծնող մշակը պիտի
վայելէ աշխատութեան պատուղը: Պէտք է ջանան նաեւ
լաւ ցանկապատ ու ցիցեր քաշել ամբողջ պարտէղին,
որպէս զի անիրաւ ու խարդախ ձեռներ, և վասող ու-
քեր չհասնին վեամներ տալու. ու ցանկապատերը նոյնինքն
ծնողներն են և լինելու են չէ թէ ցանկապատ, այլ նոյն

ինքն հիմքարերը: Եւ այն ատեն քանի սքանչելի ու
ո՞րչափ զրախտալի պիտի լինի այդ պարտէզ, ու հապա
անոր պարտիզանները որչափ անգտանելի, որոնք ողջ
աշխարհ մը պիտի թեւաւորեն իրենց պարտէզի առւն-
կերովը, և ամբողջ երկիրներ պիտի կշտացնեն. պատուղ-
ներով:

Բացորոց ծշմարտութիւնն մըն է թէ ընկերական հա-
ւաքոյթներուն բավանդակ հիմերն ու շէնքերը՝ ընտա-
նեկան յատակներու վրայ կառուցուած են. հոն են հաս-
տատուած կենդանութիւններու ոտքերը ու մինչեւ իշ-
խանական գահաթոռները, որոնց պատուանդաններն եւս
նոյն այն ընտանիքներն են: Ընտանիքի պետէ՛ր ու վա-
րիչներ, այս՝ չէք կրնար միտել, ու հակառակը ապա-
ցուցանելու անզօր ճիգերու չէք հետամտիր, և երբե՛ք,
թէ վաղնջական ժամանակներէ, մինչեւ ծննդոց օրերէն,
արդի ազգերու, երկիրներու կեսանքը՝ իր աճումներու՝
ժողովուրդի ցեղերու և համայն տիրապետութիւններու
երջանկութիւնը ու թշուառութիւնը, ընտանիքներէն
կախում չունի: Ընդունեցէք թէ՝ ընտանիքը երջանկու-
թիւնն է երբ ընտանիքի պետը հմուտ վարիչ մըն է,
անխարդախ ու անդագար գործող, արուեստին գիտակ
և մէթոսաւոր աշխատող պարտիզանն է: Հաւատացէք
թէ ընտանիքը թշուառութիւնն է, երբ վարիչը չէ
հմուտ, հաւատարիմ և գործունեայ:

Ծնողներ, հայրեր ու մայրեր, միշտ արթուն և հրս-
կող եղիք, ձեր հսկողութեան յանձնուած շէնքը պինդ
ամուր և խոր հաստատուն պահեցէք. զի այդ շէնքին
առակ պիտի ապրի ընտանեկան բոյնը իր ամբողջ թոչ-
նիկներով. զիտցէք թէ ժողովուրդ մը իր քայլերը,
խորհուրդները, զգացումները, գաղափարները, նկար-

գիրը, ուղղութիւնը, թոփչները ընտանիքի ծոցէն ու գրկէն կ'առնէ ու կը քաղէ, անկէ կը փետրազարդի ու կը ճոազարդի: Ճոազարդեցէք ձեր գոյութիւնը առով, ուսկէց քաղած ու զարդարուած գուրս գան ձեր գոյութիւնները, ու խորութիւննիդ յատկանշեն:

Դուք որոշ իրականութիւնն էք, համայնքներու հիմն էք և աշխարհ լրիւ ի ձեզ հաստատեալ կայ: Այդ հաստատութեան աստիճաններէն պիտի կրնան բարձրանալ մինչեւ մեծութիւններու, հարստութիւններու և իշխանութիւններու: Ասոնցովլ այն բաժինները գուրս պիտի գան, որոնք ցեղի մը, ազգութեան մը գոյութեան, կազմութեան, հիմնաւորութեան, շարունակութեան, պահպանումին և փառաւորումին ողջ ու առողջ կեանքին ծնունդն են և վերապրեցնողը: Դուք էք որ պիտի ստեղծէք ու ծնիք բոլոր ուժերն և կեանքեր. այսպիտի պիտի կրնաք դարեր ապրիլ նոյն անունովն ու արխնովը:

Տուն մը եթէ շէն ու շող է, եթէ առատ է ու ճոխ, եթէ յուսալից ու հացալից, եթէ ամեցուն է ու զարգացուն, ազբիւրը՝ Եղեմի ընտանիքն է, որուն վրայ Աստուած կը հովանաւորէ:

Այս ճշմարտութիւններուն առջեւ և ամեն որուայ փորձառութիւններով, կը մնայ լծակիցներուն՝ ընտանի գործակցութիւնը, անձնն ու ընկերին առաքինի և բարի օրինակը, մաքուր ու սուրբ կենցաղը, տիպար ու ֆիպար կեցուածքը, իրերավայել ու ծնողավայել ընթացքը, աղնիւ ու վայել վարքը, ազգեցիկ խօսքն ու խրառը, իրական ու իսկական նկարագիրը, որոշ ու ուղիղ նպատակը, խոնմ բարքը, գեղեցիկ հմայքը:

Դարձեալ բոլոր այս գեղեցկութիւններու ակը ո՞վ

է, եթէ ոչ ընտանիքը, և անկէ է որ պիտի բղխին ջրերը՝ երջանկութեան ու անմահութեան. ընտանիք մը չէ թէ եղեմ մըն է երբ արգիլուած ծառին հուզ չլինի, այլ նոյն ինքն սեղանը ճշմարտութեան և Խորանը Սրբութեան, որուն վրայ հանգչած է ու պիտի փառաւորի հիափայլ ու լուսափայլ յաւիտենական ճշմարտութեան ցոլացումը, և մշանջենական սրբութիւնը սրբափայլ պիտի նուիրագործէ. գուք իսնկարկողներդ այդ սեղանին և ծունկի եկողներդ այդ խորանին, պիտի լինիք նաեւ մշանակայ սպասաւորներ և անկորուստ պահապաններ: Չեր ժառանգները նման Ղեւտական ցեղին՝ այդ սրբութիւններուն ու ճշմարտութիւններուն ծառայող ու պահպանող քահանաները պիտի լինին որպէս գուք:

Պատրաստեցէք իսնկարկողներ, ծունր եկողներ, և աշխարհ Սրբարատ թող տեսնէ թէ մաքուր ու սուրբ ընտանիքներէ որչա՛փ բարոյական կեանքի տիպարներ, նոյնչափ մտքի ու որտի զարգացումներ, քանի՛ պարտակատար ու վճար անհատներ, և որքա՛ն տունին ու ցեղին, ժողովուրդին ու ազգին պատիւ բերող, անձնուէր ու բոլորանուէր հերոսներ կը ծնին:

Ժողովուրդին բարքն ու վարք՝ ընտանիքին նոյն այն զրոյմը կը կրէ ազգ. ինքնատպութիւն, ընտառնմիկ յատկութիւն, ցեղի ազնուութիւն և բնորոշող եսէր: Ուրեմն մեծ ուշադրութիւն և խոր հմտութիւն պէտք է; զի առն մը կառավարել ժողովուրդ մը կառավարել է, և ազգի մը ներկան վարել՝ անոր ապագան ապահովել է: Ինչ որ գոյութիւն ունի անկէց է, և ինչ որ կորաընցուցած է կրկն անկէց, ընտանիքինն են: Ո՞վ պիտի ժողուրտէ, կազմէ, շինէ ու յօրինէ քակուածը, քրքըրուածը, չդասաւորածը: Ո՞վ պիտի լեցնէ պակսածին

տեղը, գամէ կորսուածը, գարմանէ հարուածուածը, կանգնեցնէ գլորուածը, բարձրացնէ ինկածը, վերացնէ լքուածը, սփոփէ վշտակրածը, միթթարէ սգաւորը, ուղղէ սխալը. ազատէ թշուառը, միաբանեցնէ անմիաբանը. եթէ ո՛չ ընտանիքին լծակիցները, երբ Աստուածային չնորդիւ ու երկիւղիւ, Յիսուսի խնարծ ու հեղե և սուրբ կեանքովն ու կենցաղովը դաստիարակուած, կրթուած, ուսած ու յայդմ պատրաստուած, պարտաւորած են: Եւ ահտ այդ ուժերը սսանալու էք, ասոր կրթնելու էք, մտքերնուդ մէջ ասոնք տեղաւորած, սըրտերնուդ մէջ թրծած, հոգինուդ մէջ ծլեցուցած և լանջերնուդ քանդակած բլլաք:

Եղեմ ընտանիքներէ այս կը սպասենք, անդենական տուներէ այս կը պահանջենք:



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՐՈՒ

Հայրե՛ր, առանձին սպարտքեր ունիք առանձին կառավարութեան և գաստիարակութեան գերին ու պաշտօնին մէջ. առ այդ կը սպարտաւորիք բնախօսական կարգաւորութիւնով. զի ձեր զաւակներուն հոգը, մնունգը, կրթութիւնը տան վարժոցին մէջ՝ ուղղակի ձեղի անկէ. բնութիւնը զայդ կ'ուսուցանէ և աշխարհի կարգ ու սարք այդ կը հաստատեն:

Ինչպէս տիեզերքը Վարովը երկնքի բարի Հայրն է, այսպէս և երկիր ծնող հայրեր մեծ ու բարի Հօրը մէկ մանրանկարն են. ամէն պէտք հոգալուէ որով վարին և կասավարուին տուն-աշխարհներ: Դուք աշխատող մշակներն էք իջեւանին մէջ, և կազմող բոյները՝ նման թռչուններուն: Բոյնին կազմութեան ու պահպանութեան և կերակրութին մեծ բաժինը ձեզի վիճակած է, անսնք ամեն վեաներէ զերծ պահել ու կամաց կամաց վարժեցնելը ու մինչեւ թռցնելը դարձեալ ձեղի կը պատկանի, որով անոնք ալ իրենց կարգին բարձրանան այն աշխատութիւններուն և կազմին նոր բոյներ ու ընտանիքներ:

Հայրե՛ր: Երբ տուներ կը հիմնէք և ընտանիքներ կը կազմէք, հիմերուն ուշ գրէք, նոյնչափ քարին ու փայտին, շաղախին ու թրծումին, այնչափ ալ ճարտարապէտութեան ու զարդարանքին, որոնք համապատասխանեն ծախսին, աշխատութեան ու փափաքներուն, անսանկ որ արտաքինը, ներքինը ներդաշնակաւոր եղա-

նակաւորումով մը տպաւորիչ ազգեցութիւն մը ցուցադրեն: Այն ատենն է որ դիտող աչերը նիւթական ու բարոյական այդ շնչքերը (մարդ շնչքերը) աեւնելով, սիստ զմայլին և հացումով կանգնին, ու պիտի կշտանան և օրհնին այն ձեռները որ ճարտարապետեր են, օրհնեն այն հայրը որ ծնունդ տուած է և հասուցեր է կատարելութեան, և օրինակուած՝ իրենք ալ երթան այնպէս կերտելու կոթողելու և ծնցնելու:

Հայրե՛ր, որպէս սոսկական աշխատաւոր մի՛ գանդապիք, մի՛ յուլանաք, զի այդպիսով թշուառութիւններ կը պատրաստէք, ո՛չ թէ մինակ ձեր տանը այլ նաև մեծ տանն ալ: Հաց ճարողը գուրք էք, ու գիտէք որ առանց հացի ապրիլ գոյութիւն չունենալ ըսել է: Հայրե՛ր, գուրք որպէս պետ ու նահապետ, պէտք է աչալուրջ հակողն ու խորհող, և միեւնոյն տան ծրագրողը լինիք գործերը վարելու բաժնին մէջ: որչափ սաստող ու յանդիմանող, նոյնչափ ներող ու միրող, որչափ յանդուզն ու խիզախ, նոյնքան խոհական ու չափաւոր լինիք: Խահապետի պատկառանքը, ազգեցութիւնը ցուցուցէք ձեր կեցութեան մէջ: պետի խնամասարութիւնը բանիւ և գործով, իմաստութիւնով համեմեցէք: Հաւատը ճականնուգ, յոյսը այտերնուգ և սէրը շրմներնուգ փայլեցուցէք, զի անձերնիդ հայելի մըն է: թող ի ձեզ ցոլանան ու տեսնուին անոնք, որով իրենցն եւս պիտի կազմուի: Զգոյշ եղիք առօրեայ և առանին ամեն գործողութիւններու տան, նոյն ինքն ուրախութեան ու արտառութեան մէջ ալ: Ձեր թոյլ ու յոյլ, մեղի ու եղի վարմունքը, եղծ ու զնզծ կեանքը, յեղյեղուկ ու վաւաշոտ բնաւորութիւնը, ծխամոլի ու արբեցողի մոլութիւնը, յացրատ մոլորութիւնները, ընտանիքի հանդէպ

պազ ու բիրտ ընթացքը, տան հանդէպ անտարբեր ու անհոգ վերաբերմունքը, ծնողի և զաւկի հանդէպ սառ ու պաղ, անհաշիւ, մնտանելի դրութիւնն ու բնութիւնը, ամեն օրուայ կագ կոփւը չէ թէ մինակ ձեր ընտանիքներու վճացումն ու մահն են, այլ ամեն անսնցը որ ձեր ցեղը, տպով կը կագմնն:

Հայրե՛ր, դուք խնամասարն էք ընտանեկան ձեր յարկին ու մէն մի բնակչութեանը: Եթէ անթերի չկատարէք, ու ընդպվիք այդ սուրբ պարտականութեան առջեւ, պիտի կոչուիք անհաներ, ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ: «Եւ որ ընտանեացն խնամս ոչ ունի, ի հաւատոցն ուրացեալ է»: Այո՛, ով որ ընտանեկան խնամքին մէջ կը թերանայ, հաւատաքը կ'ուրանայ: Ի՞նչ է այդ ուրացումը, եթէ ոչ ո և է ծշմարտութեան մը գէմ գործել, իրականութիւն մը անտեսել և լոյսը խափանել: Այսպիսին ահաւասիկ հեթանոս մըն է, ծշմարտութիւնը չսիրող, անոր չհետեւող, անոր չհաւատացող. ուրեմն ամեն ծշմարտութեան հաւատացողներ եղիք և ո՛չ ուրացողներ:

Հայրե՛ր, որ այրեր էք ձեր լծակցին, գիտէք թէ իրարմով ամբողջը կը կազմէք ամուսնութիւնով, և կը ալիրանաք զլիսցն ըստ առաքելոյն: բայց ըսող մը չկայ թէ կինն ալ ոտքն է, ու չպիտի ընդունիք թէ կինը նուաստ է ու նուագ՝ հաւատարութեան նժարին մէջ, այլ առն հետ հաւատար ու համաձայն ապրող ու գործող մըն է: Երկուքին մէջ ոչ տիրապետութեան և ոչ նուաստութեան չափ զրուած չէ:

Այրը երբեք իրաւունք չունի իշխանութիւնով տիրապետել և խստութիւնով ու բռնութիւնով վարեկ: ու շատ սխալ ըմբռնում մը պիտի լինի ընդունիլ կինը իրը

ստրուկ, գերի, ստացուածք և կամ վաճառուած իր մը :

Այրե՛ր, ձեր կիները կինակից ամուսիններ են, կողակից, լծակից ու զաշնակից ընկեր, աշխատութեան հաւասար գործակից, ընտանեկան պարտականութիւններու հաւասար ընկերակից, զաւակներ ինամելու սուրբ պաշտօնին մէջ բաժնեկից, բազի, ուրախութիւններու ինդակից, թշուառութեան, արտօնութեան կարեկից, մահերու, շիրիմներու առջեւ ողբակից ու սգակից, մէկ խօսքով ձեր կինն ու կէսը : Քաջայացտէ կիներու անձնութիւնը, մայրական անօրինակ գորովը, որով այրազրկումի ատեն մայրութեան հետ հայրութիւնն եւս կը ստանձնեն, սուզ պահող, անցեալը ողբացող, յիշատակները յարգող ու օրհնող կը մնան : Այսպէս, լծակիցներու փոխադարձ ու համերաշխ սէրերն ու պարտքեր մինչեւ հողվարերը ու անդին կ'անցնին ու կը մնան անթող ու անմեռ :

Այրեր սիրելու, յարգելու են իրենց կիները ու պահելու են տան ու ընտանիքի սրբութիւն, բարոյական մեծ պարտքն ու կեանք :

Հայրե՛ր, ինամեցէք, սիրեցէք ձեր դաւակները. ինամելը չպիսի հասկնաք լոկ մնունդի պէտքը հոգալ, այլ համահաւասար թէ՛ նիւթական և թէ բարոյականը. զի ասանց երկութին, ընտանիք մը չպիսի կինայ կանգուն կենալ աջէն ու ձախէն խուժող ու հոսող պատճուներէն, որոնց գէմ միան առաջնը չպիսի կրնայ տոկալ ու բաւել. բարոյականը, այդ ուժը, կորովք պիսի կրնայ յաղթ կենալ ու թումբ քաշել բոլոր յորդուներուն : Զաւակներ լոկ հացիւ չեն ապրիր և ո՛չ ալ զգեստով ճանչցուիր, չեն պատուիր դրամով, չեն յարգուիր հարստութիւնով, չեն բարձրանար պաշտօնով ու իշխանութիւնով, երբ մտաւորականը, բարոյականը

չեն մնուցած : Ուրեմն պէտք է ինամէք ձերինները կրօնի ու հաւատի, դպրոցի ու գաստիարակութեան մնունդովը : Դուք նախ իբր առաջն դաստիարակները մի թերանսաք խրատներով, սաստերով, նաեւ քաղցրութիւնով կրթելու ազնիւն, բարիին ու գեղեցիկին, ամենէն աւելի ձեր անբասիր, անքննադատելի, վայելուչ, հեղ, խոնակն խոնական իմաստուն օրինակովը :

Զաւակներ պէտք է իրենց հօրը ճակալն և տան ցուցատախտակին վրայ ձշգութիւն ու ձշմարտութիւն, մոքրակենցաղութիւն ու սրբութիւն, աշխատութիւն ու տնաեսագիտութիւն, ընտանի, հեղ ու բարեպաշտիկ կենակցութիւն, անսահման սէր ու համերաշխութիւն, ջերմնառնդ բարեպաշտութիւն ու թունդ եկեղեցասիրութիւն կարգան, և սրտերու ու տուներու ներսը արդարութեան գործերը տեսնեն . նոյնպիսի օծում ու թրծում զիրենք ևս պիսի մզէ այդ առաքինութիւններուն : Սակայն երբ տեսնեն վէճ, անհամաճայնութիւն, գէպ՝ գաժան բնաւորութիւն, անկիրթ շարժուձեւ, հայնոյող բերան, անպատկառ լեզու, անպատճան վարժունքներ, յայրատ աչեր, վարկաբեկ ճակատ, նենդ ու կեղծ սիրոս, անիրաւ ձեռներ, անօրէն քայլեր, խմող ու ճնկող բերան, բաէ՛ք, ի՞նչ դաս պիսի առնեն և ի՞նչ յոսի կրթութիւն . . . :

Հայրե՛ր, ձեր կամքը սուրբ ըլլալու է, մտածումը՝ ձշմարիտ, ու գործը՝ արդարութիւն . ձեր զաւակները պիսի տեսնեն և տունին տունը և պիսի կատարելազործեն գարոցին մէջ : Մի՛ ինայցէք ժամանակ ու դրամ, և ամեն գնով ամեն գոհողութիւն ըրէք զաւակներու գաստիարակութեան համար, վասն զի պարտական էք . անոնց անուղղայ ու անոպայ և անդէտ մնալը ձեր դատապարտութիւնն ու մահն է : Հրապուրիչ ըրէք տունը

ու զձեզ միշտ պատկառելի և յարգելի։ Տարիքը առնող զաւակներու վրայ պէտք է խնամանէր, որդեսէր ողբն ու հոգին ցոլայ ու շողայ, և այդ ցոլումները, շողքերը լուսաւորեն, մեղմեն, սրբեն, մաքրեն, կաղապարեն զանոնք, ու զծեն, օրինակեն պատկերին այդ բարեմասնութիւնները, որոնք միշտ ու հանապազ անհրաժեշտ են մարդու մը կատարելութեան։

Հայրե՛ր, գիտէք, գեռ անանկներ կան որոնք ըմբռանած չեն զպրոցն ու զպրոցի գաղափարը, ինչպէս չեն ըմբռնած տան մը սրբութիւնն ու անոր դաստիարակութիւնը, և կան որոնք չեն քաշուիր շատ անգամ շար օրինակ ըլլալէ, անհաշիւ կը մսիսն ընտանիքին պէտքերը, կը յատկացնեն անպարկեշտ ու անբարոյ ընթացքներու, օղիին, ծխախոտին, նարախն, սատրանիխն, խումարին, ահաւոր այս անաւեր ու ձախաւեր մոլութիւններուն, և օրերով ու ժամերով չեն մտածեր ընտանիք, զաւակ, պատիւ, կեանք ու վախճան։ և չեն անդրադառնար թէ այս ահուելի ախտեր ու աղտեր կը փոխանցն ժառանգաբար ու յաջորդաբար սերունդէ սերունդ։

Սոսկացէք գո՛ւք, ու ասանկներու կարգին մի՛ մանէք, այպանեցէք, խրառեցէք ու փարսախներով հեռի փախէք, զի դառն է, օշնդր է ատոնց մատուռակումը, և հիւծախտ, ջլախտ, խեղանդամ ու գեռ մահացուցիչ հիւանդութիւններ ատոնց ժառանգն են։ Անանկներն են որ զպրոցի, անոր թոշակին հոգ չեն տանիր, աղաներ կանուխէն կը հանեն զպրոցէն, որոնք իրենց պէս ամեն վատ ունակութիւններու պիտի վարժուին ու պիտի պատրաստուին հոյլ մը թշուաններու, բանակ մը ախտաժէաններու . . . Մինչդեռ եկեղեցին ու

դպրոցը լոյս են. լոյսին մէջ խաւար գոյութիւն չունի։ Ուրեմն լոյսին առաջնորդեցէք զաւակնիդ որ չշիջանին, ինչպէս Ս. Աւետարանը կ'ըսէ. «Ես լոյս յաշխարհ եկի. որ գայ առ լոյսն մի շիջցի յաւխեան»։ Այո՛, հոն պիտի ծլին ու ածին այնչափ կենդանի յոյզով, որչափ կենսալի հիւթով, արմատէն մինչեւ բուները, բուներէն ոստերը, ոստերէն աերեւներն ու պատղները. հո՛ն գոս ու քոս, կորթ ու խորդ, խամ ու խակ, տհաս ու չհաս և փտում ու նեխոսց չպիտի լինին. պիտի կռեն, կոփեն, թեքեն, լայնան, ձիւզաւորեն, թեւեր ու բազուկներ արձկին, և որոնց վրայ կենդանի կենդանութիւններ թուին ու թառին, և շուքին տակ երամներ ու համայնքներ հովանաւորեն, պնդանան, քաջանան, բազմանան, տառաքինանան, բաժին ու բաժակ մատուռակեն տունին ու ընտանիքին, ժողովրդին, ազգին, մարդկութեան ու իշխանութեան։

Եկեղեցի ու զպրոց, կրթութիւն ու գիտութիւն մարզը կ'ազնուացնեն, կը բարձրացնեն, կը հարստացնեն, որով վայելուչ աղրուստ, հանգիստ կենակցութիւն կը ծնին, և օգտակարութիւն, բարերարութիւն։ անուն համբաւ ու անմահութիւն. իրենց կարգին ու կեսմբին զաւեներ պիտի լծակցին միանան, ու ահա միակ կապը, զօդն ու օղակը տուներուն ու ընտանիքներուն, առանց այս միացման ո՛չ ածում, ո՛չ ծլում և ո՛չ պազարերում կայ, ո՛չ զօրութիւն և ո՛չ փառք։

Հայրե՛ր, գիտցէք թէ մինակ սերնդագործելը չէ պարտականութիւն, երբ լաւ, բարի, առողջ, կիրթ, հաստատ, անձնուէր զաւակներ չպիտի հասցնէք աղդութեան ու մարդկութեան. երկրորդը ունենալու համար առաջինը իր կարգին պարտականութիւն մըն է,

թէեւ այժմուս այդ պարտականութիւնէն խուսափողներ շատ են անհիմն պատճառաբանութիւններով։ Այս ընթացքնին կրուստ, կործանում ու փացում է ազգի մը, ու այս պատասխանատութիւնը ծանր է ու դատապարտելի:

Քննադատելի են նաև տհաս, անհաշիւ, անյարմար կենակցութիւններն ալ։ Ամենին հանդէպ հայրեր մեծ ու խիստ գգուշութիւնով վարուելու են։ ընտանին, բարին ու վայելուչը ըլլալու են միայն։

Մի՛ խօսք, ո՞չ ջանք, ե՞ո՞չ քսակ մի՛ լինայէք, ո՞չ ձեր գաշտ-տառներուն և ո՞չ լոյս-գպրոցներուն։ այդ երկուքովը վերջապէս պիտի կրնաք ունենալ առայդ, ուժեղ հմուտ ու կիրթ, քաղաքավար ու զարգացած, բարեհամբոյր անեցին, գիւղացին ու քաղքցին։ այդ զաւակներ պիտի լինին մարդկային, ընկերային, կրօնային, ազգային պարտականութիւններու մէջ չթերացողներ։ չպիտի լինին ծոյլ, անհաշխատ, թոյլ ու դանդաղ, ապիքատ ու ապիքախտ, երկմիտ ու անհաւատ, երկչոտ ու սմքոտ։ Դոյլք էք վարժոցին վարիչը, տուն-գպրոցներու դաստիարակիչը։ խիստ ուշագիր ու հմուտ հիմնագիր ըլլալ պէտք է, ու այսպիսո՞վ սիրած պիտի լինիք զաւակներնիդ։

Կուաքեալը կ'ըսէ։ «Սիրեցէք որդիներնիդ ու մի զայրացնէք անոնք»։ հայրութիւնը իշխանութեան, իշխանութիւնը բռնութեան մի տանիք, հալածող ու հարուածող մի՛ ըլլաք։ ազատ ու անկաշկանդ մեծցուցէք, ազատ՝ երկիւղներէ, սրտագողերէ, անսոնց մէջ առնական կրոպ, անտեղիստալի կամք մը և կրանիթ սիրտ մը ապրեցուցէք, երկաթ բազուկներ և զրահապատ հոգիներ, որոնք ամեն գժբաղդութեան թշնամութեան տոկան,

կուուին ու յաղթանակեն։ մէկ բոպէի ազատ կեանքը կ'արմէ շատ մը տարիներու գերութեան օրերը և սաբրկութեան դարերը։ Տոհմային, ցեղային բարքերը, ուղղորութիւնները յարգեցէք, ու յարգել և պահել տուէք։ Եւս ազգային զգացումը վաս պահել ու բարձր ունենալը չայր Մերի պէս ուսուցէք։ Լալկանութիւնը, երես չուռ տալը, ընկրկիլը, փախուստ տալը առնացի կեանքին ստորնութիւն և ցեղին անարգանք է, չայութեան արաստ ու չայաստանին մեծ գժբաղդութիւնն է։

Տեսէք, թոյլ, լալկան, անմիաբան, անկորով, անգիտակ լնթացքէ քանի՛ չէնքեր մոխրացան, ո՞չչափ գիւղեր աւերեցան, քանի՛ աւաններ ամայացոն նոյնչափ քաղաքներ անմարդացան, երկչոտ բնաւորութիւններէ որչափ ուժեղ երիսասարդներ խամրեցան, նոյնչափ ծաղիկ արեւներ շիջան։ Հասպա մանուկնե՞ր, անմեղ ծաղիկ պէս փրցուեցան իրենց վարդենի թիվերէն, պաախներ լկուեցան, կոյսեր պղծուեցան, գեղեցիկներ թօշնեցան կենգանի բուներէն դուրս, ու գեռ անանկներ կուլան ու կ'անիծեն սեւ բաղերնին և դաժան . . . ընկերնին։

Ուր են տուներդ չէն ու չող, քաղաքներդ ճոխ ու բարգաւաճ, գիւղերդ նահապետական ու աւանդական, ուր են մենաստաններդ շքաւոր ու դարաւոր, եկեղեցիներդ հովանաւոր ու վեհաւոր, ուր են մաստուներուդ որքանութիւնը և խաչքարերուդ նուիրականութիւնը։ Ինչո՞ւ այս ամենը կորցրիր, ինչո՞ւ ամենուն ոտքի կոխան եղար, ուր են նախնի գահերդ ու փառքերդ, որպինետեւ հայրեր չայկի ծնունդ, Արամի սերունդ չծնան, Տրդատ ու Վարդաններ չմնուցին, առիւծներ չպատրաստեցին, կորիւններ չհասուցին, քաջեր չարտադրեցին։

Սրգեօք զրպարտա՞ծ կ'ըլլանք ձեղի , երբ ըսէնք թէ հոյրեր իրենց պարտականութիւնը կատարած չեն լիովին , ինչպէս ազգ ու եկեղեցի կը պահանջեն : Այս' , դուք որ օրինակաւ ցայց պիտի տայիք ու ըստ այնմ պիտի առաջնորդէիք դէպի հաւատ , դուք հաւատքի քաղցրութիւնը , առաւորութիւնը զգացած էք մինչեւ հոգիներնուդ խորը , դուք ձեր դժբաղդ ու թշուառ օրերուն , փորձութեան ժամերուն միփիթարութեան , քաջալերութեան սպիդանին , դարմանը վնասուցի՞ք Ա. Գրոց էջերուն ու ներշնչումներուն մէջ : Ձեր թուլցած ու յուսահատած օրերուն զիմեցի՞ք աղօթքի ուժին , ու այդ ուժովը յաւիտենական փառաց չնորհին , ձեր ինկած , լքուած բողէներուն փութացի՞ք Փրկչին որ գլորեաները կանգնելու համար եկաւ :

Դուք որ հալածուեցաք , հարուածուեցաք , չարչարուեցաք , ու զրկուեցաք ձեր շատ մը հարսաութենէն ու պաշտօններէն , դուք պատճառին գիտակ փորձեր ըրբի՞ք ատօնց դիմադրելու և կամ դարմանները ունենալու , խորհելու , որոնք պիտի կրնայիք ձեռք բերել հաւատով , յոյսով , սէրով . այս' , այն սէրով որ ամեն ուժի դէմ կրնայ կռուի ենել ու յաղթել :

Դուք ամեն օրուայ այս աղօթքը կը մրմիջէ՞ք , կը բարբառի՞ք հոգիի խորերէն . «Յաւել ի մեզ Տէր Ամենակալ զհաւատ , զյոյս , զմէր և զամենայն գործս առաքինութեան» : Մեծ է այս խնդրուածին օգուար . աղգին զօրութիւնն ու շինութիւնն է . աշխարհի պէտքերէն ու մնունդէն շատ աւելի են այդ երեք մնունդները , որոնք պիտի մնուցանեն , կանգնեցնեն , քաջալերէն , միփիթարէն , զօրացնեն ու փառաւորեն . փութացէ՞ք ամէն օր ու ամէն ժամ Աստուծոյ տունը ու Ա. Գրքին .

Եթէ չունիք ու չունենաք , փոքր նեղութիւններու , ձախողուածներու , գժբաղդութիւններու , փորձանքներու , տառապանքներու առջեւ տկարացած՝ օրէ օր գէպի անկման ու փացման պիտի գնաք , հետերնիդ ալ ընտանիք մը քաշելով :

Հայրե՞ր , մինակ դուք ձեղի և ձերիններուն համար եթէ ապրիք , շատ մեծ նպաստակի մը համար ապրած չէք լինիք . և երբ գէթ այդ պարտականութիւնն ալ չկաստաբէք , որո՞ւ և ինչի՞ համար ապրելու իրաւունքը պիտի ունենաք . ապրեցէ՞ք ձեղի և ամենուն համար , և բաժին հանեցէք խօսքէ , գործէ , ուժէ , կրթութենէ ու գիտութենէ՝ ամեն անոնց որոնք կը կարօտին . տուէք ինչ որ ունիք : «Երանելի է մանաւանդ տալլ , քան առնուլլ» կ'ըսէ Ա. Գրքը : Ինչպէս ձեր զաւակներուն , անանկ ալ գպրոցի զաւակներուն զարգացման հոգ տարէք , ու ձեր ինքնազարգացումին եւս , զի աշակերտ էք մինչ ցգուռն գերեզմանի :

Կարգացէ՞ք միշտ և օրէ օր , որ մնունդ և պաշար ամբարէք . գրքերէն լաւ բարեկամներ չկան մարդուն , երբ ընտրանոք կը զատէ այդ բարեկամները . ո՛չ կը վիճին , ո՛չ կ'ակնկալին , ո՛չ կը զայրանան , ո՛չ կը սպառեն , և ո՛չ ալ կը զրպարտեն . զրպարեցէք ձեր սենեկակները զրադարաններով , որոնց մէջ շահեկան մատեաններ ձեր իրական հարսաութիւնը կազմեն : Ու առաջին տեղը Ա. Գրքին յատկացուցէք : Գիտցէք թէ ժամանակը ամենամեծ հարսաութիւնն է . ուրեմն մի՛ վասնէք և շոալէք ի զուր . եթէ ձեր ժամանակը չէք կրնար ո՛ և է օգտակարութիւնով մը մացլնել , գէթ մտքի մշակութեան յատկացուցէք , գրքեր , օրաթերթ , պարբերականներ՝ նոր բաղձանքներ , փափաքներ ու գրգիւններ պիտի արթըն-

ցնեն. բայց ցաւ է որ մեծ մասով չէք հետաքրքրուիր, մինչդեռ ծիւել, խաղալ, խմել, շոայլել ու նոյնքանով ատակ էք. գոնէ ձերիններուն բարի օրինակ ըլլալու համար, այսուհետեւ հետաքրքրուեցէք, և ջանացէք որ ուրիշներ ճանչնան զձեզ հանրութեան բուն պարտականութեամբ մէջ:

Դիտէք, հանրութեան քով գնահատումի աստիճանաշախափ մը կայ. աշխատեցէք որ բարձրագոյն աստիճանի վրայ ցուցուիք: Աշխատութիւնը ձեր սեփհականութիւնը, գրքերը ձեր բարեկամը, դպրոցները՝ ձեր լոյսը, եկեղեցին՝ ձեր ծնողը, ծմարտութիւնը՝ առաջնորդ, սրբութիւնը՝ խորաննիդ, և պարտականութիւնը ձեր վարձքը սեպեցէք: Մի մոռնաք ձեր սուրբ պարտքերէն էն պիտանին՝ աղօթելը, տան մէջ թէ տաճարին, ու այնպէս սւսուցէք ձերիններուն, ու միատեղ կեցէք ազօթքի ու միասին քալեցէք ձեր Հօր Տունը՝ Եկեղեցին. հոն ձեզի պիտի թեւաւորէ ու հովանաւորէ. ու այդ ամեն օրուայ համար թարմ ու դալար կեանք մը պիտի չնչաւորէ ձեղի. աղօթեցէք:



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՐՈՒՆ



Մայրե՛ր. գուք էք որ երկանց ցաւերը կը կրէք ու կը ծնիք մանուկները, ու այս պարտքը որչափ պարզ, այնչափ բարդ և սակայն բնական է եղած ծնողական սրախն ու հոգիին: Առանց գասատուի վարժուած էք ու աշակերտած, և կը կատարէք այն ամենը որ հնութիւնը բուռն կերպով կը սորվեցնէ ձեզի: Այո՛, գուք ինչպէս երկունք կը կրէք, նաեւ կը կրէք այնուհետեւ բոլոր ցաւերը. գուք էք որ մանկիկին առաջին ձիչերը կը լսէք, ու անոր անմեղ ժալիաը գուք կը դիտէք, անոր աղու, անուշ աչերը ձեզի են ակնապիշ, ու անոր թեւերը ձեր կրծին են կպչուն. լացին գուք կը համնիք, ինգութիւն գուք կը հրճուիք. անոր աղածրի անբծութեան ու անգիտակից նայուածքին մէջ ինամքի պէտքը կը սերտէք, անոր փարումին ու ապրումին մէջ գորովի ու գութի շեշտը կը կարդաք. կը դիեցնէք զայն ձեր երկու թարմահոս ու կաթնահոս աղբերակներէն, ու կ'օրօրէք զայն է՛ն զգայացունց ու հոգեցունց եղանակերգերով, որուն մէջ մայրութիւնը ամբողջ կը պասկերանայ: Կ'ընէք, կը լրացնէք այն ամենը որ մայրը կը պարունակէ իր մէջ:

Բառն խակ թովիչ, հմայիչ չէ՞: Մայր... ի՞նչ քաղցր բառ, որ կը յեղյեղի ամենուն բերնին մէջ հաւասարապէս: Ան խափր չունի և չի զներ ո՛չ ուամկին և ո՛չ աւագանին, ո՛չ երիտասարդին և ո՛չ ծերին, ո՛չ արուն և ո՛չ իզին, խցիկներէն մինչեւ հոկայ ու հոյա-

կատ պալատները նոյն այն մայր բառն է որ կ'ոլորտի, ու կ'արձագանդէ անապատներու խորը, ու մինչեւ կախաղանի բարձունքն ալ: Այս բառին առջեւ ամեն ոք կը խոնարի, ամեն բերան պատկառանօք ու քնքօրէն կը բարբառի: Խնդութեան մէջ մայրը կը վիճառուի, տրամութեան մէջ ա՛ն կը կանչուի, մահուան անկողնին ան կը հակէ աղօթքներով ու արցունքներով, պատկազարդ ճակատներուն ա՛ն կը դրոշմէ տաք համբոյրը:

Այր ու հայր, կին ու մայր, ահա՛ տան ու ընաանքի պետերը, զաւակներու տէրերը. ու այս ընական կարգով ու օրէնքով կը ծնի անխուսափելին, որ է ծնիլ, անուցանել, պահել ու հոգալ, չէ թէ լոկ կաթով ու հացով, այլ այն ամենով որ պիտի հասցնեն մարդեր կատարեալ:

Մայրե՛ր, ընական իրաւունքով մանուկները ձենէ պիտի սպասեն ծննդեան օրերէն մինչեւ այրութիւն ու մայրութիւն ամեն իրաւունք ու պէտք, որ ձեր ալ պարտքն է ճիշդ կաթի օրերէն սկսեալ, և զոր Աստուած և ընութիւն ալ անփոփոխ օրէնքով ու կանոնով այնպէս անօրինած են և պարաւորքուցած, մայրը՝ մանաւանդ՝ որ իր կաթնալի կուրծքը զաւկին համար տրամադրեր է, թէեւ սա եւս հմմակ նորութեան ու փափկութեան կարգն անցած է, այսինքն զրկել մանուկը մօրը անուշ կաթէն ու դրկէն, ու յանձնել մանուկը օտարին որ փարձուոր է:

Մայր մը լինի թագուհի թէ իշխանուհի, քաղաքացի թէ գիւղացի, նոյն այն մայրական անխուսափելի պարաւականութիւնը ունի, և պէտք չէ խուսափի. զի դա ո՛չ շնորհ է և ո՛չ վայելչութիւն, ո՛չ նորութիւն և ո՛չ փափկութիւն, ո՛չ մեծութիւն և ո՛չ ալ ստորնու-

թիւն, այլ մի միայն մեծ զրկողութիւն է բնական կարգերուն և բնասառու կամսններուն, երբ կաթնազրիւր աղքերք բոնի ցամքեցնելու տիմար ջանքեր կը լինին: Մանկիկը դիեցնել, զայն օրօցին քնացնել, անոր ամէն պէտքերը խնամու ու գուրգուրու ձեռքերով նայիլ՝ նուիրական պարտականութիւն է ամեն մօր: Դիտեցիք բոլոր թունազգիներ, ընտանի ու ոչ-ընտանի կենդանիները, թէ ի՞նչպէս բոյն կը կազմեն ու կը չինեն, և համբերութիւնով կը կերակրեն կը դիեցնեն, թեւերով և ընական զէնքերով ի՞նչպէս կը պահպանեն ու կը պաշտպանեն ամեն վտանգներու դէմ: Անոնք անբան են և կ'ընեն լրիւ իրենց մայրական պարտականութիւն, հապա որչա՛փ առաւել բանականներու:

Մայրե՛ր, զիեցուցէք, մանուց հոգէք, կրթեցէք, զի ձեր սուլքը պաշտօնն է, և ուրիշներուն ալ օրինակ եղի՛ք. հակառակը մի՛ զորձէք, բնութեան ու Աստուծոյ օրէնքներուն անսաստող մի՛ լինիք, և ո՛չ ալ օրինակ այլոց, որով պատճառ լինիք մեծ զիջողութիւններու ու թերացումներու:

Մայրե՛ր, երբ մանուկներ կը սկսին թոթովել բառեր ու խօսքեր, այդ օրերէն ձեր վրայ նոր նոր պարտքեր ու բեռներ կը ծանրանան. այդ օրերուն ա՛լ կազմած ու կանգնած կը լինի վարժարանը, ու դուք ալ մայրութեան վարժուհիութեան կ'անցնիք: Քանի՛ կը քարանչանաք, որչա՛փ կը հիմնաք երբ սննդը Մայր ու Հայր բառերը կը գեղգեղեն. այդ երկու անզուգական բառերուն առջեւ գուշ ալ կը գոհանաք, և կը մոռնաք ձեր քաշած բոլոր տառապանքները. բայց գիտցէք որ անմիջապէս ուրիշ երկու անզուգական ու յաւիտենական բառեր ալ թոթովել տալու պարտքն ունիք, Բարձ-

բեալ Աստուծոյն և բաղձալի Հայրենիքին անունները : Այս՝ բոլոր չնորհներուն ու նուէրներուն փոխարինութիւնը պիտի լինի . մին՝ որ բանական հոգին ու ծնունդն ամբողջ չնորհնեց , միւսը՝ որ հողով , ջրով ու օգովք ծնցուց ու պիտի մնուցանէ ու աճեցնէ մարդ կատարեալը :

Մայրե՛ր , դուք ձեր զաւակներուն մայրն էք ու դաստիարակը , իսկ ձեր այրերուն կինը , տուներու տանտիկնը , ընտանիքին խնամատար հրեշտակը : Նախախնամութիւնը՝ ձեզ այդ մեծ պատուին , նուրբ զգացումներուն , փափուկ ընութեան ու բնաւորութեան արժանացուցած է : Ասոր արժանի ընթացք պէտք է , ու շարժիլ այնպէս որպէս վայել է խնամատար հրեշտակի կոչման : Դուք իբր կին ու լծակից և կողակից , ընկերակից ու հաւասարակից , միասնաբար պիտի աշխատիք բոյնը կազմելու , ընտանիքը վարելու : Լծակցութեան մէջ հաւասարութիւնն է որ պիտի տիրապետէ . ո՛չ մին գլուխ է և ո՛չ միւսը ոտք (սխալ հասկացողութիւնով) , այլ հաւասար են առն և կնոջ պարտիք եւ իրաւունք . և երբ Առաքեալը կ'ըսէ «Այր գլուխ է կնոջ» և նոյնպէս թէ «Կանայք հնազանդ լերուք արանց ձերոց» , շատ ուղիղ տրամաբանութիւնով մը կը ձշուի հաւասարութեան սկզբունքը , զի գլուխը մտածողն է և հրամայուղը , որով բոլոր կազմաւորութիւնը մարդուն ըստ այնի պիտի գործէ . և լաւ գործերը , ուղիղ քայլերը հնազանդութեան արդիւնքն են , ու ամենը ի մի եղանակաւորած ու զաշնակցած կը բերեն կատարեալ արդիւնաւորութիւն : Որչափ գլուխը պիտանի է , նոյնչափ մարմնոյն բոլոր անդամները . և իւրաքանչիւրը իր պաշտօնին դեռքովը պիտի ամենի մէկն մէկնիքն է աղատ ու հաւասար արժէքով : Բայց հնա-

գանդ գործակցութիւնը գուրս կը բերէ ամէն մէկին արժանիքը : Հնազանդութիւն , օրինապահութիւն ու կարգավահութիւն վերցուր մարդէն , տունէն , աշխարհէն , տհա անոնք բնաւ բան մը չպիտի արժեն : Ուրեմն հնագանդութիւն պայման է և ո՛չ ստորինութիւն , և հնագանդ կիներ պարծանքն են տանը , մարդուն ու աշխարհին , գոհարն են ընտանիքներուն , պսակը՝ այրերու գլխին , մեզմացուցիչ անուշ գեղը անուղղայ , խիստ , դէգ , դաժան բնաւորութիւններուն :

Կինե՛ր , ձեր պարտքերը առաքինութիւնով կտարքէք . զի դուք բոլոր սաացուածքին տէրն էք . ձենէ կախում ունի տան մը կանգնումը , և այնպէս ալ՝ գլուրումը . դուք ազդող ու շարժող ուժն էք : Որչափ բազծալի է ու սիրալի , երբ ձեր ուժերը հրաշալի բարեմասնութիւններով թրծուած և գերազանց առաքինութիւններով օծուած լինին : Կինե՛ր , ժրագլուխ եղիք և իմաստուն , ինչպէս Սոլոմոն իր Առակաց գրքին մէջ կ'ըսէ . «Ժրագլուխ կինը իր էրկանը պսակն է» : «Իմաստուն կիները իրենց տուները շնուցին , իսկ անզգամները իրենց ձեռքովը կործանեցին» : «Պարկեշտ կինը Տիրոջը տուրքն է» (Սիրաք ԻԶ.) :

Սոլոմոնի գեղագիծ վրձնով վրձնուած սա տողերը միշտ կարգալ կ'արժէ . «Առաքինի կինը ո՞վ կինայ գըտնել . անոր գինը գոհարներէն շատ աւելի է . անոր էր կանը սիրաը անոր վրայ վատահ է , ու աւարի կարօտ չըլլար : Անիկայ իր կենաց բոլոր օրերուն մէջ անոր բարիք կը բերէ և ոչ թէ չարիք : Բուրդ ու քթան կը վինաէ , և ուղած ձեռքովը կը գործէ : Անիկա վաճառականի նաւերուն կը նմանի . իր հացը հեռու տեղէն կը բերէ : Եւ անիկա գիշերով կ'ելլէ , ու տանը մարդոցը

կերակուր և իր աղախիններուն բաժին կուտայ: Արտի
մը վրայ կը խորհի ու զանիկա ծախու կ'առնէ, և իր
ձեռքերու պառուղէն այգի կը անկէ: Իր մէջքը զօրու-
թիւնով կը պնդէ, ու իր բազուկները կը զօրացնէ: Իր
վարսակին աղէկ ըլլալը կը հասկնայ, անոր ճրագը գի-
շերը չի մարիր: Իր ձեռքերը իլիկին կ'երկնցնէ, ու
ափովը բովքը կը բռնէ: Զեռքը աղքատին կը բանայ, ու
բազուկները կարօտներուն կ'երկնցնէ: Իր տանը մար-
դոցը համար ձիւնէն չի վախնար, քանզի բոլոր ընտա-
նիքը կրկին հանդերձ հագած են: Իրեն ծածկոցներ կը
շինէ: Իր հանդերձը բեհեղ ու ծիրանի է: Անոր էրիկը
կը ճանչուի դռներուն մէջ, երբոր երկրին ծերերուն
հետ կը նսափի: Կտաւ կը գործէ ու կը ծախէ, և վա-
ճառականներուն գօտիներ կուտայ: Գօրութիւն ու փառք
կը հագնի. ու եաքի օրերը պիտի ուրախանայ: Իր բե-
րանը իմաստութիւնով կը բանայ, և իր լեզուին վրայ
քաղցրութեան օրէնք կայ: Իր տանը ճամբանները կը
քննէ, և ծուլութեան հացը չուտեր: Անոր տղաքը կ'ել-
լէն ու զանիկայ երանելի կ'անուաննեն: Անոր էրիկն ալ
զանիկա կը գովէ ըսելով. շատ աղջիկներ առաքինի
եղան, բայց դուն ամենէն գերազանց եղար: Վայելլու-
թիւնը սուտ է, ու գեղեցկութիւնը ունայն է. սակայն
Տէրոջմէն վախցող կնիկը պիտի գովուի: Տուէք անոր
իր ձեռքին պառուղէն, ու անոր գործքերը դռներու մէջ
գովին զանիկայ:» (Առակ. Ա.Ա. 10)

Անա մի գեղեցիկ պատկերաէջ, որուն մէջ կինը կը
յայտնուի այն գեղեցիկ առաքինութիւններովը, որուն
գլխին օրնութիւնը և շնորհն են որպէս ծաթող արեւ,
ու անոր հանդերձանքը չնորհալիութեան ու տիպար ջա-
նապրութեան, որ ամեն դռներու մէջ պիտի գովուի խօ-

սող բերաններէ: Ահա՝ այսպիսի կիներ տուներու օր-
նութեան պատճառը պիտի ըլլան, և միջոցը երկնքի
իսպաղութեան հովանաւորումն:

Կին մը որ իր էրկան, զաւակներուն ու Երկնաւոր
Հօր կը նուիրուի ամբողջութիւնով, տունը՝ Աւետեաց
երկիր մը, ընտանիքը՝ Արեւելքի եղեմը կը դարձնէ:
Իմաստուն, ժրագլուխ, աշխատող, առաքինի, աղնիւ,
հաւատաւոր, ազգին նուիրուող անձնուէր կիներու
պատճութիւնները շատ շատ են. անոնց օրինակին հե-
տեւեցէք, անոնց ճամբէն քալեցէք, ու դուք պիտի
մնիք նկարներ, գէմքեր, պատկերներ, որոնց վրայ կը
լրանան ու կը ցոլանան իմաստութիւնը, ժրագլխու-
թիւնը, և որ աւելին՝ պարտաճանաչ մայրը, որ տու-
ներու սիւնն են:

Մայրեր ու կիներ, ձեր ծոցէն դուրս պիտի գան
օրինակներ առաքինութեան, տիպարներ պարկէշտու-
թեան, բարեպաշտութեան եւ աղնուութեան, և որոնց-
մով է որ ձեր գլուխները պիտի փայլին իբրեւ պսակ ու
դափնիներ, անոնց գլխին ու ճակախն՝ սրբութեան,
արդարութեան ու լուսաւորութեան երբեակ ճաճանչ-
ները:

Կիներ տնտեսագէտ ու խնայող ըլլալու են: Այրը
որչափ որ պիտի շահի ու վաստակի, կինը պիտի կար-
գագրէ ու անտեսէ. այրը պիտի մտածէ ու գործէ, կինը
պիտի կարգաւորէ ու դասաւորէ. այրը պիտի պահպանէ,
կինը երջանկացնէ, այրը պիտի քրանի, իսկ կինը քըր-
տինքի այդ կաթիլներովը պէտք է զրախտ մը հասցնէ
տուն եղեմին մէջ, ամէն գեղեցկութիւնով ու բարիք-
ներով լի: Այրը եթէ խստանայ, կինը պէտք է մեղմէ,
երբ ան ցաւի, ինքը սփոփէ: Այրերու ճախողանքը ու-

բրնձ շատ անգամ կամքէ անկախ պատճառներէ կուգան, երբեմն շուկայէն ու ընկերներէն, ատեն մը գործէն ու անհաշիւ մսխումներէն, ահա այն ատեն կարող կինը, կորովի տանտիկինը, անկեղծ կողակիցը, հաւասարակից ընկերակիցը պէտք է դուրս գայ առնական կամքով, ու կնոջ մը փափկութիւնով՝ բաժնելու ցաւը, դարմաներու վիար, փրկելով այսպէս՝ տուն մը ու ընտանիք թշուառութիւններէ :

Կիներ որչափ ծուլութենէ, նոյնչափ բամբասանիք պէտք է փախին, որչափ շուայլութենէ, նոյնչափ անաւեր նորութիւններէ, որոնք խելքած հեղեղներու պէս կը քչեն կը տանին ինչ որ տուն-զաշախն մէջ գոյութիւն ունի : Կինը պարկեշտ տանտիկին ու համեստ կին ըլլալու է, հապանդ ամուսին և բարեմոյն լծակից . կինը ընտանիքի պահապանը, տանը սովորութիւններուն աւանդապահը լինելու է, զի տան մէջ ոգին է ու ընտանիքին սիրած . աննենդ ոգին ու անկեղծ սիրած բուն սիւներն են, որոնց վրայ հեծած է ամեն ծանրութիւն . կինը տանը վայելուչ զարդարանքը, ընտանիքի շնորհն է, հարսաւութեան, ուրախութեան աղբիւրն է . կինը տանը բժիշկը, ընսամնիքի հիւանդապահն է, և անհրաժեշտ ամեն գործերու ու պէտքերու հոգատարն է : Ուշրեմն ըլլալու է հաշուող մատակարար, խոհեմ տնտեսագէտ, չափաւոր ծախսող, վայելուչ յարդարող, մաքուր և առողջ կինցաղի առաջնորդ, շնորհալի քաղաքավար, քաղցրակեղու խօսող, և պարզասէր հագնող :

Մայրե՛ր, փայլեցնելու էք առաքինի վարք, խոհական բարք, աղնիւ ընթացք, սուրբ ու զգայուն սիրա, բարձր ու հրեշտակացին ոգի՝ մարմնոյ մը բարոյականին . կրելու էք շնորհազարդ գլուխ, խմաստուն նայուածք,

ամօթխած այտեր, մտածող միտք . և ասոնցմով պիտի կրնաք տունները շինել, ինչպէս կ'ըսէ Սոզոմոն . «Իմաստութիւնը իր առնը շինեց» :

Դուք նաեւ գաստիարակիներն էք ձեր զաւակներուն . անոնց կրթութիւնը ձեզնից կը պահանջուի, ձեզնից որ ո՛չ օտար գաստիարակիներ էք և ո՛չ ալ վարձւոր: Աշխարհ Արարատ գիտէ թէ բնութիւնը այդ պարտաւորութիւնը բեռցուցած է ձեզի, ու դուք սիրով կը տանիք այդ, ու մէկը չպիտի կրնար անցնիլ տեղը անոնց, որոնք հայր ու մայր կը կոչուին: Ի՞նչ են ձեր պարագր, եթէ ո՛չ սորվեցնել այն ամենը, որոնք բարութենէ և ծմարտութենէ կը բղխին, և որոնց առաջնորդերու վարժութիւնը ձեզնէ լաւին չպիտի վիճակէր: Անոնք սկզբի օրերուն ինչպէս որ կը կարօտին ապրելու համար լոկ ձեզի, բարոյապէս ապրելու համար գարձեալ նոյն կարօտն ունին: Անոնք լոյսին մէջ կոյրեր են, հարսաւութիւններու մէջ սոսկական ալքաաներ . ինչպէս լոյսը խաւարեն չեն կրնար զանազանել, անանկ ալ չարը բարիէն: Դուք էք որ տարիներու համբերանքովը ու համրանքովը պիտի տեղաւորէք մատղաշ մտքերու և սըրտերու մէջ բարին գիտութիւնը, լոյսին չնորհները: Դուք էք սկզբնական աղբիւրը՝ ուսկէց կենդանի և ոսոգուն պիտի հոսի բարին ու պիտանին:

Բարին սորվեցուցէք, լոյսին առաջնորդեցէք: Եթէ ծառը բարի է պտուղն ալ բարի պիտի լինի, իսկ եթէ չար՝ չար: Մանկացեալն ալ այս կը բարբառէք . «Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի և մարդ չար՝ ի չարէն բղխէ զշար»: Որոշ է թէ մանուկ մարդերու սրտի գանձարանին մէջ ամբարածը օր մը. պիտի սրտաբերի, ուրեմն այդ ամբարումը գիտակցաբար և

վճռաբար, հմտորէն ու պատշաճօրէն ըլլալու է. դուք հոգածու էք, որ կաթը իր ժամուն արուի, օրօրօցը իր ատենին դրուի, զգեստը իր ժամանակին հոգացուի։ Այո՛, նիւթական բարիք երբէք չէք խնայեր դուք. բայց առանց բարոյական բարիքի և հոգեկան կրթիչ դաստիարակութեան չէ կարելի ճշմարիտ բարիքներ տուած ըլլալ զաւակներու, բարիքներ՝ որոնք մնայուն ու իմաստուն, իրական ու ճշմարիտ լինին։ Սորվեցուցէք, կրթեցէք, մարզեցէք ասողջութեան, մաքրութեան, աղնուութեան, չարքաչութեան, փոխազարձ պարտականութեան, հեղութեան ու համբերութեան ծնողասիրութեան, ընտանեկան յարկի յարգանքին, մեծերէ պատկառումին, բարիին, աղնիւին, ճշմարաին և ճշմարիտ Աստուածպաշտութեան, որ ձեր պարաքը կատարած ըլլաք։ Զգոյշ եղիք ձեր արդուզարդին, խօսելակերպին, մախումին, կեանք կենցաղին, զի դուք հայելիներն էք. ձեր զարդերը ատոնք են, ձեր ոսկի մանեալը, բազի գոհարազարդ ապարանջանը, ամենքը ձեր բարի ու կիրթ զաւակներն են, ինչպէս իտալացի կին մը զաւակները կը ներկայացնէր իբր գոհար ու մարգարիտ և բան մըն ալ աւելի, անոնց՝ որոնք իրենց արդուզարդին ու պաճուճանքին վրայ սոնքացողներ էին։

Երբէք մի յաւակնիք վատահութիւն ունենալ ձեր հարստութիւններուն, որոնք բաւացնող ըլլան ձեր զաւակներու բոլոր պէտքերուն ու մինչեւ անոնց ծերութեան հասցնող, եթէ կրթուած ու դաստիարակուած չեն. ու երբ այդ փոյթը ունեցած չէք, ամենամեծ մարդասպանութիւնը կատարած կը լինիք։ Փորձերը այնչափ պերճախօս են և օրինակները շատ անգամ թարմ, թէ անոնք որ փարթամ հարստութիւններու տիրացած են ու

գուրկ գտնուեր են իրական դաստիարակութիւնէ, ահա մսիսեր շուայեր են անպատուաքեր ճանքներով, և երբէք օգտակարութեան մը համար։ Այսպէս անդաստիարակ, անկիրթ, անուսում ժառանգորդներ՝ հայրենի ու մայրենի հին ճոխութիւն ու հարստութիւն սպառելով, վասնելով աղքատացեր և թշուառներու խումբը շատցցեր են. այսպէս յետամնաց զաւակներու ժառանգորդներու համար ճշմարիտ ու ուղիղ և մնայուն բարիքը միշտ և միայն հիմնաւոր դաստիարակութիւնն է։

Ուրեմն դաստիարակեցէք. թող գիտնան թէ պարաւաւոր են նախ ձեղի՝ ծնողացդ՝ հնազանդ ու երախսագէտ գտնուեիլ, նոյնպէս և աւելի՝ երկնաւոր ամենաբարի ծնողին, պարտաւոր ու պարտական՝ ցեղին ու ազգին։ Մեծցուցէք ձերինները մարզկութեան, ազգութեան և Ամենակարողին ծառայող ու անոնց պարտաւորող, որ այդ ուղիով գէպի հոն համենին ուր մինահ կատարելութիւնը կը կարգացուի։ Ո՞րչափ կիրթ այնչափ քաջ, քանի՛ առողջ այնքան սրտոտ, որչափ անձին աշխատող նոյնչափ պատուին, որչափ մտքով զարգացած այնքան սրտով բարեկրթուած, որչափ հաւատացեալ նոյնչափ բարեպաշտ եկեղեցասէր, երկիւղած. այդպէ՛ս պատրաստեցէք։

Մայրենի լեզուին մեծ հոգ տարէք, յետոյ օտար լեզուի, նոյնչափ տիրող լեզուին. մի մոռնաք կրօնի գասերը։ Օրօրտցէն սկսեցէք եղանակել հայրենիքի երգերը, աներկիւղութեան եղանակները, ու չէ թէ ձեր հանգստին համար շատ անգամ փոքրերը վախցնէք թէ ելք եկաւ, գայլը գնաց, լորին լուր պիտի տամ. ֆիւրեն եկաւ, մօրուք պապան քեզ կ'ուտէ։ Գիտէ՞ք որչափ գէշ կ'ազդէ մանուկ սրտերուն, ու այդ երկիւղը մինչեւ ձե-

րութեան կը գնայ . դուք պարտաւոր էք սորվեցնելու թէ ոչ ել կայ և ոչ ալ գիլ, ոչ փէրի կայ և ոչ բզզ մրզ աղեկներ, այլ թէ մարդ վախնալու չէ ոչ քիւրտէն և ոչ սա ու նա եղած ու չեղած ուժերէն : Ամեն տպայ ազատ մեծցնելու է, ու ծառայ լոկ ազատութեան : Եթէ տալ պէտք է ատոր գնման մի փոխարժէք, մինչեւ իսկ արեւ ու արին տալու է :

Ուսուցէք այս, նոյնպէս և աւելին՝ աղջիկներուն թէ կեանքը սուղ է ու պատիւը սուրը, վեհ ու երկնային, և զայն պաշտպանել ամէն գնով ամէն աղջկան պարտքն է : Ինչո՞ւ ամէն օր կարգանք, ինչո՞ւ ամէն օր լսէնք թէ այս ինչ աղջիկը փախցուցած են, այնինչը պղծած, ուրիշ մը իսլամացուցած . կին մը բոնաբարած են, ուրիշ մը լկեր են, և ինչո՞ւ լեռնորդիներու, և կամ ուրիշ ցեղերու չի պատահիր, և ինչո՞ւ այս ստորնացուցիչ դիրքին իջած լինինք . և կամ մերոնք ինչո՞ւ սուղ չի ծախէն պատիւնին, և կամ ինչո՞ւ քաջութեան օրէնակ մը չըլլան . և յանդգնողներն ալ մի լաւ դաս առնեն թէ՝ հայ աղջկայ կամ կնոջ պատիւի հետ խաղալ հեշտ գործ չէ :

Դաստիարակ մայրեր, ա՛լ բաւ է որ երկչոտներ ու լալկաններ դիեցուցիք . շատ հեռի կը գտնուիք նախնի մեր դիւցազն մայրերէն, որոնք վահագներ, Տիգրաններ, Թորոսներ, Թափուլներ դիեցուցին, Շուշաններ, Զապելներ, Կատարինէններ ծնցուցին . քիչ մըն ալ ու աւելի սոխոծի կորիւններ, ինքնութեան, գոյութեան կըռուին, պատիւի պահպանումին մարտիկներ ու մարտկուհիներ ծնցուցէք : Պատմութիւնը ատանկներու շարք մը ունի, որոնց առջև պէտք է խոնարինք ու ձամքներէն վեր անոնց քայլէնք : Սրտոտ ու դիւ-

ցագն մայրեր պատրաստեցէք, որ կարիւններու ծնունդ տան և առիւծներ մեծցնեն, որոնք տան ու կեանքին, ինչքին ու պատուին, ցեղին ու հայրենիքին մեծութեան ու փրկութեանը կուրծք տան :

Զինուորութիւնը ա՛լ իրականութիւն է, ուրեմն այնպէս մեծցուցէք ձեր զաւակները, որ կարենան տոկալ ամէն չարքաշ կեանքի և աներկիւղ գնան պարտքի ձամքէն, ձեր անոնց տալիք վերջին նուէրը լինի կա՛մ մահը կամ ազատութիւն՝ պատերազմի յաղթանակէն :

Տղաներ այսպէս . իսկ աղջիկներու գաստիարակութիւնը լինի տոհմային, չէթէ օտարախաէն բռնուած՝ ձեր աղջիկները սալօնի աղջիկ պատրաստէք, այնպէս հեղդ, մեղկ, չուայտ ու մոխող, թեթևաբարոյ : Խիստ ուշագրութիւն դարձուցէք նախ մայրենի լեզուի հմտութեան, երկրորդ առանին աշխատութեան, մաքուր հայերէն խօսուին զրեն, Ա . Գրոց ու Հայ . Պատմութեան տեղեակ լինին . նաև աւլող, մաքրող, կարող կարկատող, եփող լուացող ըլլան : Մի խօսք, պատրաստելու էք հայ աղջիկը, տանտիկնը, գիտակ մայրը, չէ թէ պաճուճանքը սիրող, պչրանքի հոգի տուող, ներկերու և կեղծ շպտոններու սիրահարող, իր լեզուն թողած սա ու նա լեզուով բարբառող, և սասնկով տուն, զաւակ, ընտանիք ձգած սալօններու մէջ գեգերողը ունենաք :

Խայթող, գայթող ընթացքներու հետամոռներու շարք մը մէջ աեղ մի բերէք : Երենալու, հաւնուելու, իրը չեղածը ծախելու իմաստակներ մի՛ մեծցնէք : Ուսուցէք որ շղարէն աւելի գիրքը, բեհեղէն աւելի թուզթը սիրեն . պարէն աւելի տան գործերը, գաշնակէն աւելի ընտանիքի հոգը նախասիրեն, տուներու եւ մարմնի ճոխ արդուզարդերէն աւելի գրադարաններու

պէտքը նախընտրեն։ Սովորեցուցէք թէ աղօթել պէտք է, Աստուծոյ հետ հաղորդակցութիւն ունենալու համար։ Ասով յախտենին ջշմարտութիւնը, անսահմանին արդարութիւնը պիտի ունենան։ Ուսուցէք թէ օգնել պէտք է ամէն անոնց որոնք օգնութեան և գթութեան պէտք ունին։

Գիտնալ պէտք է թէ՝ քրիստոնէական սէրը պարաւորիչ է, անձնուիրութեան գաղափարը ստիպեցուցիչ մաքուր բարոյականը ամէն մարդու համար մեծ դրամագլուխ է և Երկնից Ս. Թագաւորութեան ճամբան։ Պատիւր ամուր բերգ է ու պատմէշ. ով որ զայն չկարենայ պաշտպանել, ամէն թշնամի ազատ ելումուտ պիտի ընէ, ամէն մի հարստութիւն խորելով։ Մայրէ՛ր, կենդանի և աչքառու օրինակով ցոյց տուէք, գործադրեցէք այն ամենը որոնցմով պիտի կրնան պատրաստուիլ մարդերը։

Մարդիկ՝ այր թէ կին, արու թէ էգ, գիտնան իրենց բոլոր պարականութիւնները սկիզբէն մինչեւ վախճանին։ Տունը, ընտանիքը, ազգը, կրօնը, ծնողը, զաւակը, ամենը ասի կը պահանջն։

Քրիստոնէութիւնն ալ իր բաժինը կը պահանջէ. անորը երբէք մի մոռնաք։ Զեր ու Զերիններուն կեանքը խնկաման ըրէք ու աղօթքը՝ խունկ, ու ծխեցէք ամէն օր Աստուծոյ տաճարներուն մէջ, ու ծուխը ծառանայ մինչեւ վերը չնորհաց աթոռը ու հոնկէց հաւնի Զեղ այն ամենը որով օր մը առաջնորդուիք անանց կեանքին։ Անանց կեանքը գերազասեցէք ու ունեցէք. ինչո՞վ, եւ թէ ո՞չ աղօթքով։



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԶԱԿԱԿԱՆՈՒԹՈՒՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՈՒՆ



Զաւակներու պարտքն է ճանչնալ իրենց ծնողները. ծնողական այնչափ սիրոյն, գորովին ու հոգասարաւթեան անկշռելի չափն ու քանակը կը աղատել ու ճանչնալ հարկաւոր է. աշխարհի վրայ չկայ ծնողէն զատ մէկը որ կարենայ այնչափ գորովով ու խանդաղատանքով սիրել և մինչեւ իսկ կեանքն ու հոգին տալ անհաշիւ ու շատ անգամ անմտած։ Այս ծնողական սիրոյն փոխագարձը զաւակները նոյն սիրովը, և լեցուն յարգանքով ու փոխարինութիւնով վճարելու են։ Հօր ու մօր հրամանները յարգել ու հպատակիլ, անոնց գծած ուղիէն քալել, ցոյց տրուած ճամբէն գնալ, գծուած օրէնքներէն պատկառիլ, կանոններէն չընդգնիլ, տան իշխանութեան, ընտանիքի կարգադրութեան, և մէն մի դրուած ու տրուած պարտաւորութիւններուն տեղի չտալ, ու համբերանքով ու համակրանքով ջանալ պարտաւորութիւննին է։

Զաւակնե՛ր, ձեր ծնողներ աղքատ ըլլան թէ հարուստ, ուամիկ թէ զիսուն, արուեստաւոր թէ իշխանաւոր, երկրագործ թէ պաշտօնեայ, այո՛, ձերն են և ձեր ծնունդին պատճառը, ձեր մնուցումին աշխատողները, անկողնի մնարին հսկողը, չարէն զգուշացնող ու բարիին առաջնորդողը. մի խօսք, ներքին ու արտաքին մարդուն քանդակող, կոող կոփողը։ Ու դուք

սիրով ու նոյնքան հլու հպատակութիւնով, հնազանդ ոգևով պէտք է ապրիք խրճիթի թէ պալատի մէջ, որ ձեր ծնողացն են:

Դիտցէք թէ աշխարհի վրայ ոչ մի օրէնք գոյութիւն չունի, որ զաւակները ազատ կացուցանէ տան պարտաւորիչ, ընասանիքի բաղկացուցիչ իշխանութիւննէն. միայն մէկ սէր ու պարտաւորութիւն աւելի է քան երկրաւոր ծնողներու պարտաւորութիւննէն ու սէրէն, ու այն ալ Աստուծոյ սէրը, ու Անոր հանգէսլ պարտաւորութիւնները: Ինչպէս աւերն մէր Փրկիչը կ'ըսէ. «Ով որ իր հայրը ու մայրը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ»: Արդէն շատ որոշ է և ուղիղ դասուած, թէ երբ մէկը զԱստուած չի սիրեր իր անձէն, հոգիէն, ինչքէն աւելի, չպիտի կրնայ նաև սիրել իր ծնողը ան պէս որպէս պարտաւոր է: Երկրաւորը երկնաւորինարաննկարն է և հեռանկարը:

Զաւակնե՛ր, երբ գուք բոլորովին խելամուտ լինիք աշխարհն ու իրերուն, մարդերուն ու կեանքերսւն, այն ատեն պիտի կրնաք խելամուտ ըլլալ թէ ծնողները որչափ անգամներ բարձրագոյն զոհողութիւններով, քըրտինքով ու արիւնով լրիւ պէտքերու կը համնին, ու կը լեցնէն պահանջներ ամբողջ, փափաքնիդ ողջ: Դիտէք, երբեմն ալ խատապահանջ ու անհաշիւ կը գանուիք. անոնց քունը խոռված, հանգիստը կորած, անձը մաշած, կեանքը շիջած, հարսաւութիւնը մախուած, երիտասարդութիւնը ալեւորած, վայելքը մոռցած, բարիքը շատ անգամ անտեսուած, և միայն ձեզի համար ապրուստի, ապրումի և զարգացումի համար, ամէն վասնդ աչքի առած, ամէն փորձանքի կուրծք առւած, բոլոր գժուաւութիւններու գրո՞ն առւած, յաղթած ու յաղթուած,

բայց իրենց ծնողական սուրբ պարտքը կատաած, ըլլալու պարտավճարումովը գոհացած և դիտակցութիւնովը յագեցած են:

Ուրեմն գուք ի՞նչպէս փոխարինելու էք. անհոգութիւնով, ծուլութիւնով, անտարբերութիւնով, անքաղաքավարութիւնով, անպատասխանատու ընթացքով թէ աներախտագէտ ոգւով: Ո՛չ, ու դարձեալ ո՛չ, այլ խոնարհութիւնով, պարկեշառութիւնով, համբերութիւնով, աշխատութիւնով, հազամնդութիւնով, սիրով, յարգանքով, քաղցրութիւնով, պատկառելով, ամեն պէտքերնին հոգալով ու պահելով: Հլալու էք հիւանդութեան խնամող, ախտաւորութեան դարման հոգացող, դժբաղդութեան օքնող, թշուառութեան համող, ալրամութեան միմիթարող, անկարողութեան նեցուկ, ծերութեան պաշտպան, ինչպէս Սիրաքի իմաստութիւնը նոյնչափ որոշ կը գեղագրէ. «Որդեակ, քու հօրդ ծերութեան օգնական եղիր, ու զայն մի՛ տրտմեցներ իր կեանքին մէջ. և եթէ խօսք հասկնալու կարողութիւնը պակսի, նորէ անոր, և քու ուժովդ մի՛ անպատճեր զանի: Որովհետեւ հօրը ողորմած եղողը Աստուծմէն չպիտի մոռցուի: Քու մեղքերուդ համար քեզի չարիք պիտի դիզուի, և քու նեղութեանդ օրը զքեզ պիտի յիշէ փսասի համար. և ինչպէս տաքութիւնը սառը կը հալեցնէ, նոյնպէս քու մեղքդ քեզ պիտի հալեցնէ: Կատուծոյ հայհոյիչ կ'ըլլայ անիկա, որ իր հայրը կ'անարդէ, և իր մայրը բարկացնողը Տէրոջը անէծքը պիտի ընդունի:»

Դուք մինչև գերեզմանի գուոը պարտաւոր պիտի լինիք: Այս՝ բարի և ազնիւ զաւակներ որդիիստիկան պարտականութիւններու մէջ չեն թերանար, ինչպէս անոնք

գործնականապէս ու շօշափելիօրէն զաւակներու համար չեն ինայած :

Ուրեմն մի՛ թերանաք : Եթէ թերանաք ու ծուլանաք, անանկներու կարգը պիտի անցնիք որոնք անիբարտ, անհնազանդ, անառակ, անալիտան, ապերասան, ապերախտ, կոռւազան, ծնողամերժ, ստահակ, անբարոյ ու մինչև ոճրագործի կեանքով կ'ապրին : Գիտցէք թէ անոնց կեանքը ողջոյն և մինչև ծերութիւն անգունելի, այսպանելի պիտի ըլլան ամենուստ և յերկնուստ միշտ դատապարտելի և վախճաննին խղճալի ու ողորմելի :

Ասանկներու օրերը գժբաղդութեան շարք մը, և տարիները ցաւագին կեանքի մը քաշքուիլը պիտի լինի : Հապա ծերութիւննին, ինչ սոսկալի ու ահուելի ճգնաժամերով պիտի քրքրուի ու քայքայուի : Ասանկները չէ թէ սպասող պիտի լինին ծնողական գութն ու գորովը, կայքն ու գոյքը, անունն ու պատիւը, արեւն ու օրերը, պատիւն ու սրբութիւնները, այլ և իրենցն ալ պիտի սպասոի, և սառնաքարշ ու գետնաքարշ սուզուկումով մը պիտի անցնին հատած ու մարած աշխարհի ու երկրի վրայէն ու ցյաւիտեան :

Պէտք է ջանաք գուշք Յակոբի նման ծնողին օրհնութիւնը առնել : Եսաւը թող ձեր մտքի ուշքը գրաւէ, թէ նա կորսնցուց իր իրաւունքը, այն ատենը որ մասնաւոր առաջնութիւն մը ունէր անզբանկութիւնը ու յարգի էր և յարգելի անդրանիկը, բայց յոռի վարք ու բարք ամենը կորսնցնել կուտար նոյն իսկ երկվայրկեանի մը մէջ : Մի մոռնաք այս դասը ու չպիտի մոռնաք պարտականութիւններու շարքը, նոյնպէս և ձեր ծնողներու ձեզի ըրած բարիքը, երկնաւոր Հօր շնորհները, ու այն ատեն Յակոբի նման օրհնութիւն պիտի առնէք,

օրհնութիւններ, որոնք ձեր մէջը կենդանի պիտի պահն աղնիւ ու առաքինի կեանքի ամեն ծիլերն ու ծիւզերը, և գեղեցիկ գաղափարներու, մաքուր ու ջինջ զգացումներու մշակումը միշտ անեցուն ու կենսունակ պիտի թողուն . նուիրական ձգտումներու, սրբազն փափաքներու բոլլբոջիրը պիտի ծաղկազարդէ անձ ու կեանք, միտք ու սիրտ . ձրի բաշխուած ու շնորհուած պարգեներ ամենուստ ու յերկնուստ, որոնք ձրիատուր և անխարապէս ժամանակին կը արուին, ընդունիլ ու պահել պարտիք . ով որ շատ խնդրէ շատ պիտի արուի :

Սողոմնի գոհար խօսքերը մտիկ ըրէք ու մանեակ, և պատուական պարբերութիւնները՝ ճակար պսակ . «Որդեակ քու հօրդ խրատը մտիկ ըրէ, ու քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր . քանզի անոնք քու գլուխագ՝ շնորհաց պսակ և քու պարանոցդ մանեակներ պիտի ըլւան» : (Առկ. Ա. 8—9)

Տղաքներ, գուք ինչպէս ծնողներու պատուէրնները պահելու պարտաւոր էք, նոյնչափ ալ ձեր զասատուներունը, երբ երկրորդ ու բուն վարժոցին կ'որդեզրիք, ու կ'աշակերտիք : Գիտցէք որ ինչ գուրգուրանքով, ինչ գորովանքով որ զձեզ ինամեցին, սիրեցին ու առաջնորդեցին, նոյն և պիտի գանաք զասատուներէն, ձեր մոտաւորական ծնողներէն : Դուք ձեր ծնողներուն պաշտաման գեղեցիկ առարկաներն էիք, նոյնպէս և զասատուներէն պիտի ըլլաք, քանդակուած, կոփուած գեղեցիկ արժող արձանները՝ այնչափ թանկ ու հանք :

Դպրոցները որչափ ալ նախակրթարան ու միջնակարգ վարժարաններ ըլլան, զարձեալ ձեզի ուսուցած պիտի լինին այն՝ որ ձեր զպրոցական քայլին սկզբնաւորութիւնը, և նոր թեւակոխած կեանքին նախաքայերը կը գծէ :

Աշակերտնե՛ր, դուք երկու յարկերուն՝ Տունին և Դպրոցին մէջ ձեզի արուած ուսումներուն հետեւեցէք, դասաւանդութիւններուն ուշ գրէք, բոլոր ձեր ուշադրութիւնը կեղրոնացուցէք, որպէս զի արուած պատուէրներուն համաձայն վարուիք, եւ ուղղութիւնով գնաք կեանքի ճամբէն, որ միշտ կը կարօտի առաջնորդի մը, եւ այդ առաջնորդը պիտի լինի իմաստութիւնը, իսկ օգնականները պիտի լինին կրթութիւնն ու գիտութիւնները։ Այո՛, հո՞ն պիտի աշակերտիք և սովորիք։ և արդէն աշխարհ ինքնին մեծ վարժոց մըն է, և մարդիկ ամեն հո՞ն աշակերտող։ Ով որ կը ջանայ արուեստապետին կարողութիւնները, հմտութիւնը և արուեստին գաղտնիքները ունենալ, նա օր մը յաջողապէս արուեստապետ մը պիտի լինի և իր կարգին ալ նորութիւններ պիտի մտցնէ արուեստին մէջ։

Դասապուհերու պատուէրները, հրահանգները, թերագրութիւնները ընդունեցէք, անոնց հեղինակութիւնը ճանչնալով։ իմաստունն Սողոմոն շատ լաւ և համկալի կը խօսի, որ ամենուս ալ կը պատշաճի։

«Որդեակ իմ, թէ որ իմ խօսքերս ընդունիս ու իմ պատուիրանքներս քովդ պահես, այնպէս որ ականջդիմաստութեան տաս ու սիրադ հանճարին բանաս, թէ որ դուն իմաստութիւնը քեզի կանչես և քու ձայնդ հանճարին ուղղես, թէ որ զանիկա արծաթի պէս փնտուես ու ծածուկ գամճերու պէս ինդրես, ան ասենը Տէրոջը վախը պիտի հասկնաս, և Աստուծոյ գիտութիւնը պիտի գոնես։ վասն զի իմաստութիւնը Տէրը կուտայ։ գիտութիւնը և հանճարը անոր բերնէն է»։ (Առակ Բ. 6)

«Երբոր իմաստութիւնը քու սրտիդ մէջը մտնէ և գիտութիւնը քու հոգւոյդ ախորժելի ըլլայ, խոհեմու-

թիւնը քեզ պիտի պահէ ու հանճարը քեզ պիտի պաշտպանէ» (Եոյն, 10—11)։

Դուք իմաստութեան շատ կը կարօտիք, վասն զի ան է որ ձեզ գժա՞ի կեցութիւններէ, անխելք վարմունքներէ, անպատշաճ ընթացքներէ ազատ պիտի կացուցանէ։ ուրեմն իմաստութիւնը վնասուցէք և ձեր մտքին զարդը ըրէք ու սրախն հանգերձանք, ու այն ատեն խոհեմութիւն ու հանճար պիտի վաստիքիք, և որով պիտի ապրիք ապահով փափաքելի կեանքը և փառաւոր հանգերձեալը։

Դպրոցը հալոց մըն է, ուր մարդ - մետաղները քուրայէն պիտի անցնին և զտուած գուրս գան։ Զանացէք որ ոսկի գուրս գաք և ոչ թէ զիրս գուրս նետուիք իբր անպէտ։ Դպրոցը վեթակ մըն է, ուր մարդմեղուները պիտի բզզան ու թրթուան գրքերու ծաղկանոցներուն մէջ, և ժողվեն տեսակ տեսակ հիւթերը, և ժրաջան ու մեղուածան սկսին շնել մեղի տունը, ուրիշ մեղը հսսի անուշ ու նուշ, ու պահուին ու պահեն ամենը ձմեռուայ երկար օրերուն։ Որպէս մեղու, մեղը շնելու և փեթակ ունենալու ջանացէք, և ո՛չ թէ ճապանն նման լոկ երգող լինիք ամրան, ու ձմրան մահացող։

Խնդրելի, սիրալի, ու ընդունելի ժամանակը, նոյնքան երջանկալի ու ուրախալի ժամերը դպրոցականիննեն։ Կ'արմէ որ ամէն ձիգ, քրտինք ու զոհողութիւն թափէք։ Թէև ձիգեր ամեն իրենց գժուարութիւններն ունին բնականաբար, բայց միակ ճամբան յաջողութեան և կեանքի բարձրացումին՝ այս է, որով պիտի հարթէք ամեն ճամբայ եւ աւազուա, պիտի վերցնէք բոլոր արգելքներ, պիտի կոուիք ողջոյն թշնամութիւն-

ներու գէմ, որոնք կ'ուզեն ձեր անմեղ ու ամբիծ ձաւ-
կատները խարանել, սիրաը կծել, հոգին ածխացնել:

Աշխատութիւննիդ օրնութիւններ պիտի բերէ ձեզի.
մոլութիւն, մոլորութիւն ու խնկածութիւններ ձենէ
հեռի պիտի ապրին, ու մօտիկնիդ պիտի կենակցի առա-
քինութիւնը, սրբութիւնն ու կատարելութիւնը: Կըր-
թութիւն ու գիտութիւն բանասէ են, և ամեն անյաջու-
ղութիւններու գեղթափը: Բոլորանուեր նուիրուցէք
գրասեղաններու, թաղուեցէք գրքին ու թղթին ծրա-
րոցներուն մէջ, վասն զի մարդս իմացական ու բարոյա-
կան ներգաշնակութեան ու համաձայնութեան մէջ պիտի
պահնեն, ու գուք պիտի հիմնաւորիք, ձիւզաւորիք ու
բեղմնաւորիք: Այս ատեն անուշ քնարներու, խօսող
թելերու, բամբ տաւիդներու, հոգեթրթիս գաշնակնե-
րու քաղցր երաժշտութիւնը պիտի նուագուի ու եղա-
նակուի ի ձեզ:

Ի՞նչ են զաւակի և աշակերտի պարտաւորութիւն-
ներ.— Ծնողասիրութիւն, մարդասիրութիւն, կրօնասի-
րութիւն, հայրենասիրութիւն, աշխատասիրութիւն:
Ի՞նչ են մարդկային պարտաւորութիւններ.— Մտքի
զարգացում, սրտի բարեկրթութիւն, անձի առողջապա-
հութիւն, հոգիի մաքրութիւն, երախտագիտութիւն,
հաւաաքի տոկութիւն, ջերմեռանդ բարեպաշտու-
թիւն, ցանկալի առաքինութիւն, և լրումն ամենայնի
Սատուածպաշտութիւն, որ աղբիւըն է ամենայն բար-
եաց, իմաստութեան, գիտութեան ու ամեն յաջո-
ղութիւններու:

Եթէ գուք զաւակի ու աշակերտի օրերուն չզգաք
պէտքն ու քաղցրութիւնը հաւատքին, եթէ առաքի-
նութիւններու ամբողջութիւնն ու արմատը Ա. Գրոց

մէջ չփնտոէք, եթէ ձեր փորձութիւններուն, գժրաղ-
դութիւններուն ու թերացութիւններուն ատեն չըմբռնէք
կարեւորը և միակը՝ Աստուածպաշտութիւնը, որ այդ
վերահաս վտանգներէն ազատելու ու կրկնն յոտին
կանգնեցնելու միակ կարողութիւնն է, և եթէ չընդու-
նիք թէ հացի մատոնդէն առաւել և միակ մատոնդն է
երախտագիտութիւնը առ երկնաւոր բարի Հայրն, գուք
անյաջողներ պիտի մնաք ձեր բոլոր կեանքի օրերուն
մէջ:

Ուրեմն Ս. Գիրքը ձեզի առաջնորդ ըրէք, զի այդ
գիտութիւններու գանձարանն է, բարոյականի ծնողն է:
Դիմեցէք Անոր ու աղօթքին, որ ձեզ յուսագրէ,
քաջալերէ, միսիթարէ, բարձրացնէ ու իմաստնացնէ: Ա-
զօթքի գիտութիւնը վահանապատ ոյժ մըն է. անոր ե-
տեր սպաշտակնեցէք գուք ձեզ, ու անով պատրաստուե-
ցէք ամէն փորձութիւններու գիմազրելու: Առանց այդ
ոյժին, պիտի ընկրկիք ամէնափոքր նեղութիւններու ու
փորձութիւններու առջև. և ահա գպրոցն է որ ձեզի
պիտի ուսուցանէ ամենը, որով բարի ու պարկեշտ մար-
դը գուրս պիտի գաք. գպրոցէն հարստացած, պիտի
բարեգործէք ծնողն, ազգին ու նմանին: Բարերարելը
ձեր արուեստը պիտի լինի, և այդ արուեստը բարձրա-
գոյնին պիտի հասցնէ ձեզի. գերբնական գաղափարնե-
րու, գերագոյն զօրութիւններու պիտի առաջնորդէ. և
ասոնք ալ բարձրագոյն զոհողութիւններով կը ստացուին:

Օ՞ն, ջանացէք ձեր զաւակի ու աշակերտի օրերը ան-
ցընել մեթոտիկ աշխատութիւնով, պարտաւորած նսա-
զանդութիւնով, պէտք եղած ուսումով, օգտակար դա-
սերով, մաքուր հաւատով, նախնեաց գծած ուղիներով.
և ահա գուք բաղդին անակնկալները պիտի լինիք: Աի-

րեցէք տոհմային կրթութիւնը, բարքն ու վարքը.
սիրեցէք, ա'յո, հայ լեզուն, գիրն ու գիրքը. սիրեցէք
առանին ուսումները, մի անտեսէք հանդէպ ֆիզիքա-
կանի ու բարոյականի՝ երկու այդ մօտիկ դաշեակներու
ամբողջ ու ողջ պարտքերնիդ:

Լոյսի ակնէն— դպրոց— պիտի սովորիք ամենը. սի-
րեցէք դպրոցը, պատկառեցէք անկէց, յարգեցէք, պատ-
կառեցէք ծնողներէ, դասատուներէ որ լինիք ապագայի
բաղն ու փառքը: Սիրեցէք Եկեղեցին, նա ձեր ծնողն է,
Անոր թեւերուն տակ դուք աղատ պիտի լինիք ամեն
չարէ, ամեն փորձանքներէ: Ով որ Եկեղեցի չունի
կրօն չունի. ով որ կրօն չունի հաւատք չունի. ու ով որ
հաւատք չունի կեանք չունի:



Ա Դ Օ Թ Ք Ը

Աղօթքը՝ բարիներուն երգն է, ու չարերն են որ
երգ չունին:

Աղօթքը՝ սրտին վահանը, հոգիին բերդը, ու կեան-
քին պատմէն է:

Աղօթքը՝ զօրաւոր է բանակներէ աւելի, և ահեղ՝
հսկայ Լեւիթան մարտանաւերէ:

Աղօթքը՝ գեղն է ամենաբոյժ՝ աշխարհ մը լեցուն
մեղքերուն, և գեղթափը Ովկէաններու խորունկու-
թիւնովը յանցանքներուն:

Աղօթքը՝ սրտին լուսինն է ու հոգիին արեւը:

Աղօթքը՝ սրտին աչքն է ու հոգիին դիտակը:

Աղօթքը՝ սրտին նեկտարն է ու հոգիին բանասէն:

Աղօթքը՝ յուղիչ, գրաւիչ, հմայիչ լեզուն է մար-
դուն ու հոգիին ճարտասանն թարգմանը:

Աղօթքը՝ ոսկի սանդուղն է գէպի ի երկինք ելնելու,
և արծաթէ կամուրջը՝ մեծ անջրապետին վրայ ձգուած:

Աղօթքը՝ հրեշտակներու բարբառն է ու աստուա-
ծային լեզուն:

Ուրեմն աղօթենք Ամենակարողին, Ամենազօրին,
որպէսզի չնորհէ բոլոր Եկեղեցիի պաշտօնեաններու եւ
սպասաւորներու կարողութիւն, որով կարողանան խրզ-
ճամտորէն պաշտօնավարել իրենց յանձնուած պարտա-
ւորութիւններու շրջանակին մէջ, համբերութիւնով ու
հմտութիւննով, նոյնչափ անկեղծ ու աննենդ աշխատու-
թիւնով:

Այո՛, աղօթենք բոլորանուէր ու խոնարհ սրտով, որ առաստավարդեւ նուիրէ ոյժ ու կարողութիւն բոլոր ժուզվորդեան, որով կարողանան տանիլ իրենց ուսերուն դրուած ծանր բեռները, ու հանգչած ու հանգտաշած կրկն բեռներու առջեւ չկքած չ շմորած ու յուսահատած՝ կարենան քալել նեղ ու գժուարին ճանբաներէ իսկ մինչեւ հոն՝ ուր վաստակեալներուն համար կեցած կայ յաւխտենական հանգտաշաբարը, ու հոն ամեն ոք կարենայ իր բեռները ամբողջ վար դնել ու փոխան առնել բեռներ որոնք թեթեւցած են:

Աղօթենք մարդասէր ազատասէր Փրկչին, մանկացած ու մարդեղացած Բանին, որ եկաւ ողջ աշխարհի մը բեռները թեթեւցնելու, ծանրակուռ շղթաները փըշրելու, երկաթապիրկ լուծերը վերցնելու, և փոխան տալու է՛ն զիւրատար է՛ն հեղահիւս լուծերը։ Հիացիկ ու վերացիկ պատկառանքով մը դիմէ՛, Քրիստոնեայ, դարերու ծոցէն, տարիներու գրկէն թէ՛ Սն ի՛նչպէս սիրով փութաց տառապով, մեռնելու մօտ մարդկութիւն մը ողջ՝ ապրեցնելու համար, մութին ու խոր խաւարին մէջ հձնող ու հառաջող շրթներն ու սրտերն ազատելու, անանկ ալ հաւատով լի եկաւ սատանի ու բռնակալի գերութեան, գժոխային տարտարուներու մէջ տապլակով հոգիները մշանջենապէս փրկելու. բերաւ իր հետ լոյսի գօրաւոր լուսարձակներ, ճակատն՝ երկնքի չափ լեցուն աստղերով, այսերուն՝ տրեւ լուսինով, շրթներուն կեանք չնորհող շունչով, լեզուին՝ քաղցրալի բարբառներով, ու սրտին՝ լեփ լեցուկ Աստուածային սիրով մը. ու իջաւ ի խոնարհ՝ հո՛ն թողնած կառքեր հրեղէն, թեւեր ու թոփէներ բոցեղէն, հո՛ն ձգած զուարթուններու մեզեղիները, հրեշտակներու հիարարբառ ալէլուները, ու ե-

կաւ մեղքի խորունկ ձորերուն, յանցանքի չեչոտ ու տատասկուս ծերպերուն և նամէտ ծմակներուն, որմնց մէջ ինկած, լքուած, քայլայուած, գօսացած, քարագոսած, բորբոսած, ժանգոտած, մոլորած, անսառակացած կեանքերուն դարաւոր վայիւններն ու հձիւնները լսելու. ձայնեց, եղանակեց հայրաբար, հովուաբար ու սիրավառ, և առաւ գրկին, զրաւուսին, լուաց արխնով, սրբեց խաչանիշ դրօշով ու ծանրեց առաջնորդեց այն Տունը որ Հօրն էր, իրենցն էր և որ իրենք կամովին թողնած պանդխացած էին ու հարստութիւննին սպառած, մինչեւ խոզերու կերակուր-եղիշիւններուն ալ զիջած էին, ու գարձեալ կը զլացուէր։

Աղօթենք գեանսամած, պաղատինք ձեռնամած, երկըրպագենք բեկեալ սրտով անօրինակ Հեղին, աննման Խոնարհին որ իրեն աշակերտով, Տաճարին սպասաւորող ծառաներուն տայ նոյն հեղութենէն, նոյն խոնարհութենէն բաժին մը, որ միայն իրեն յատուկ է, բայց գոնէ փոքր միեւնոյն տաեն առաս բաժին մը չպիտի զլանայ։

Այո՛, թող չնորհէ, պարգեւէ, նուիրէ, որպէսզի հավիսներ այդու օրինակաւ հովուեն, ինսամենն, սպասաւորեն հօտերնուն. ու ժամանակնին, կեանքերնին նուիրելով՝ անոնց համար ապրին, անոնց հետ արտասուեն, ու միամին խնդան։

Այո, թող ժողովրդին ալ չնորհէ նոյն այն հեղութիւնը, որով կարենան ամեն գժուարութեան առկալ, նոյն այն խոնարհութիւնը, որով կարենան բարձրանալ մեղքէն ալ, յանցանքէն ալ և ամեն ինկածութիւնէ ու թըշուառութիւններէ։ Աստուածային սիրովը թող վառէ բոլոր կուրծեր հրավառ ու լանջքեր սիրավառ, ու այդ ամբողջ հրդեհի վասուածքը այո՛, պիտի լուսաւորէ ա-

մենքը, ու ամենը մէկի ու մէկը ամենին համար պիտի ապրին :

Աղօթենք չնորհաց Ս. Հոգիին, մշտնջենական Մխիթարիչին, յաւիտենական Սրբութեանն ու Իմաստութեանը, աղօթենք Անոր՝ որ խոստացուածն է թէ Ան պիտի զրկեմ ու Ան ձեզ պիտի մխիթարէ :

Ու մանաւանդ Հայ ազգը որչա՞փ և քանի՞ անգամներ պէտք ունի յաւիտենական այդ Մխիթարիչին, իր մահերուն համար որոնք աշխարհք մը կը լեցնեն, իր արցունքներուն, որոնք ովկէաններ կը կազմեն, իր թշուառութիւններուն՝ որոնք Բարելոնի աշտարակներ կը կազմեն, իր աւերներուն համար որոնք սիրու ու հոգի կը նշդրակին :

Աղօթենք որ Ան բոլոր հոգիներուն մէջ հանգչի. անկեղծ ու սուրբ սրտերու մէջ տիրապետէ, և իմաստուն մտքերու մէջ թագաւորէ. ու թող վարէ, առաջնորդէ ու նուիրագործէ, ու մանաւանդ բոլոր իր չնորհն առած պաշտօնեաններուն մէջ իշխէ, տիրէ ու տիրապետէ, սրբէ անոնց մռայլ ու կնճռոտ ճակատները ու նման աղաւնիի մնջէ գլուխնուն ու օծէ ճակատնին այն նուիրական կենսաբոյր իւղովը որ մշտնջենական գուարթութիւն, անջինջ սրբութիւն, ու անթերի իմաստութիւն կը զեղու :

Հողեղէն լեզուները ընէ հրեղին, որոնք բարբառին միայն ճշմարտութենէ, արգարութեան ու խաղաղութեան, սրտերու ու հոգիներու մէջ գուն գործէ առասնեղով հաւատ, յոյս ու սէր, եռանդ ու խանդ որով գործէն, որով ջանան և որով արդիւնաւոր են հովուի ու հօտի ամեն աշխատանքը :

Աղօթենք, թող առատ զեղու սկիզբէն, խոստաց-

ուած չնորհները հոգիին, մխիթարութեան, կեանքի ու իմաստութեան, չնորհընկալ ժողովրդի գլխին, որպէս զի հոնկից (զլիէն) բղխի կեանքի մխիթարութիւնը, իմաստութիւնն ու լոյսը, որոնք պիտի բաւեն ժողովուրդ մը ամբողջ ու ողջ առաջնորդելու բարձրագոյն նպատակներու, գերագոյն իտէալներու և լոյսերու Լոյսին որ բոլոր իմաստութիւններու ծնողն է. ու աշխարհ իմաստութիւնով շինուած չէ :

Աղօթենք որ ժողովուրդը իր կեանքի տունը, ընտանիքի տունը, հայրենիքի տունը, հոգիի տունը այդ իմաստութիւնով շին :

Ու իմաստութեան սկիզբը Տէրոջը երկիւղն է, և որուն փառք յաւիտեանս ամէն :



Ա Ե Ր Զ



ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
2	5	կը	..
9	3	Մելխորգեկի	Մելքիսեդեկի
19	9	յագնիք	յոգնիք
29	6	սստայնանկեր	սստայնանկեր
33	5	ակնկալութիւններ	ակնկալութիւններ
42	13	դու	դուք
50	22	օրուայ	օրուայ
54	5	օրնին	օրնեն
55	10	անհատներ	անհաւատներ
56	15	անթող	անթաղ
58	5	պատկերին	պատկերեն
59	9	նեխոց	նեխում
59	28	հաստատ	հարազատ
64	5	հանրութեան	հայրութեան
67	17	զիջողութիւններու	զրկողութիւններու
67	24	մայրութեան	մայրութենէ
72	18	հեծած	յենած
78	29	մարմնոյ մը	մարմնացումը

ՑԱՆԿ

Արտաձօն մեծ ու բարի հօրս՝	
Կարապետ եֆ. Ասլանեանի	գ.
Սիրելի մեր ժողովուրդին	Ե.
Պարտականութիւն Արժ. Քահանայ եղբայրներուն	9
» Պատ. Թաղ. Խորհուրդներուն	31
» Դպրոցի Հոգաբարձու, Խնամակալ	
և Տեսուչներու	39
Պարտականութիւն Ուսուցիչներու և Ուսուցչուհինե-	
րու, նաեւ Դպրոցականներու	41
Ընսանիքի պարտքը	47
Պարտականութիւն Հայրերուն	53
» Մայրերուն	65
» զաւակներու և աշակերտներու.	79
Աղօթքը	89

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

O - 1 98 00



360f

«Ազգային գրադարան



NL0030768

